№ 22 ՈՒՐԲԱԹ 31 ՅՈՒՆՎԱՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 31 ՅՈՒՆՎԱՐԻ № 22

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատունը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ

43-ՐԴ ՏԱՐԻ

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Նէրսպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.։

ՊՐԷՄԻԱ «Մշակի» տարեկան բաժանորդները, որոնք 1914 թ. ընթացքում լրիւ վճարած կոմնեանս 10 ռուբլի բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետեւեալ գրքերից Մէկը. «Դր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.», Վրձինի «Մանրանկարներ»։ Վերջին գիրքը կը տրվի նրանց, որոնք բաժանորդագրվել են մինչև 1913 թ. դեկտեմբերի 25-ը։ Մնացած բաժանորդները կը ստանան առաջին գիրքը։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

Մոսկու միաբան ՍԻՄԷՕՆ ԱՒ. ՔԱՀԱՆԱՑ և ՏԻՐՈՒՀԻ ՄԱՆԱՆ ՁՄՇԿԵԱՆՆԵՐԸ, ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ՆԵՐՍԻՍԵԱՆ ու ԱՇԽԷՆ ՄՈՒՇԵՂԵԱՆ ՄԱՂԱՔԵԱՆՆԵՐԸ և ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԸ սրտի ցաւով յայտնում են ազգականներին, բարեկամներին ու ծանօթներին իրանց ազգականի և մտերիմ բարեկամի՝

ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ,

Ներսիսեան դպրոցի նախկին ուսուցչի և ռուսերէնից-հայերէն բառգրքի հեղինակի մասին, որ տեղի ունեցաւ յունվարի 29-ին, չորեքշաբթի գիշերը լոյս հինգշաբթի։ Ամբիծքը կը կատարվի փետրվարի 1-ին, շաբաթ, երեկոյեան ժ. 7-ին Զուբալովի անուան Տանը (Սուվերնայա փողոց № 48)։ Յուղարկաւորութիւնը նոյն տեղից դէպի Մողոու ս. Գէորգ եկեղեցին փետրվարի 3-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, իսկ թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։ 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(ՉՈՒՐԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ Ն.)
ՀԱՅԿ. ԴՐԱՄ ԽՄԲԱԿՑ.

Այսօր, ուրբաթ, յունվ. 31-ին ՀԱՅՈՑ ԴՐԱՄ. ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ Կը ներկայացնէ

ԻՍՐԱՅԷԼ

Պիէս 3 գործ. հեղ. Բերնշտէյնի, թարգմ. Մ. Զարիֆեանի։
Մասնակցում են—տ. ՍԻՐԱՆՈՇԾ, պ. պ. Արմէնեան, Ալլահվերդեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Յարութիւնեան, Սեւումեան, Փափազեան Վահրամ, Տէր-Առաքելեան, Օվհաննեան և ուրիշները։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գները 5 կ.-ից մինչև 50 կ.
Բժիշկապետ՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամ՝ ՄԻՐ. ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ
73. 1—1

Թերմինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ներքին հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԹՍԻՆ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒՐԲԵՐՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈՏՈՐԱՅՈՒՄՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարները լուսաւորված ՐԵՆՏԳԷՆԻ ՇԱՆԹԱԳԻՆ ՇԱՌԱՁԳԱԹԹԵՐՈՎ։ Ամէն օր 9—1 ժամ ցերեկ. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՌՈՐՆԵՐԻՆ ԱՌ. Ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская 23, тел. 7—92.
(ա.օ.) առ. 977 100—66

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւններ։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—3
(եր. ժ. 5—8
Ելիզաւետինսկայա փ. № 39. տ. Զաղէթեանի։
(չ.ուվ.) առ. 901. 100—38

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

II

«Մշակի» № 17-ում մենք առաջ բերինք այն գլխաւոր մեղադրանքները, որ վրաց ինտելիգենցիայի մի մասը և վրաց մամուլի մի քանի օրգաններ բարդում են հայերի վրա և այդ մեղադրանքները համարում են պատճառ, որ վրաց հասարակութեան մէջ զարթնում են թշնամական զգացումներ դէպի հայերը։

Առաջին մեղադրանքը, թէ Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ հայ ընտրողները նպաստել են վրաց ազգի մեծամասնութեան ընտրելի Անդրօնիկովի ընտրութեան մատալման և փոքրամասնութեան ընտրելի Չխէիձէի ընտրութեան աջողութեան, մենք, լսելով թէ վրացիների և թէ հայ ընտրողների բացատրութիւնները, գտնում ենք անհիմն և անապացոյց։ Պետական Դումայի պատգամաւորի ընտրութեան ժամանակ պայքարը կուսակցական էր և ամենից շատ ընտրական ձայնը վրացիներին էր պատկանում. վրացի ընտրողների մեծամասնութիւնը ծայրայեղ ձախակողմեականներին էր պատկանում, ուստի և այդ մեծամասնութեան շնորհիւ ընտրվել է սոցիալիստ Չխէիձէն, այլ ոչ կադէտ Անդրօնիկովը։ Մի քանի հայ կադէտ ընտրողների ձայներն նշանակութիւն ունենալ չէին կարող։ Այս՝ առաջին։ Երկրորդ, որ քուէարկութիւնը գաղտնի լինելով, դժուար է ճշդօրէն հաստատել, թէ Չխէիձէն հայերի ձայների դերակշռութեամբ է ընտրվել թէ վրացիների։

Բայց գլխաւոր մեղադրանքը, ինչպէս ասացինք, այն է, որ հայ կապիտալիստները գնում են Վրաստանում հողեր և զրկում են վրացիներին իրանց տերրիտորիական սեփականութիւնից։

Այդ մեղադրանքի դէմ մենք այս կասենք, որ եթէ հայ ինտելիգենցիայից, հայ մամուլից կախված լինէր ստիպել հայ կապիտալիստին չը գնել հողեր Վրաստանում, նրանք այդ ամենամեծ ուրախութեամբ կանէին և կը ստիպէին հայ կապիտալիստին գընել հողեր գնել Երևանի, Գանձակի նահանգներում. բայց, դժբաղդաբար, կապիտալը ազգային նկատումների շրջանակից դուրս է. նա վազում է միայն այնտեղ, ուր ամենամեծ շահի աղբիւր է նկատում. ուր առաջարկ կայ, այնտեղ և պահանջ կայ, այնտեղ և գնող կայ։ Եթէ Վրաստանում վրացի կալուածատէրերը էժան գներով ծախում են իրանց հողերը, հայ կապիտալիստը եթէ չը գնէ, կը գնէ թուրք, հրէայ, ռուս, ֆրանսիացի, գերմանացի կապիտալիստը, և դրանով վրացի գիւղացիների կամ ժողովրդի հողազրկութեան վտանգը չի անցնի։ Վերջապէս, մենք հայ կապիտալիստներից միայն Մանթաշեանին գիտենք, որ նորերս կալուած է գնել Գօրու մօտ ցեմենտի մի գործարան հիմնելու։ Այդ գործարանը աշխատանք է հայթայթելու ոչ հայերին, այլ տեղացի վրացի ժողովրդին։ Սակայն, կրկնում ենք, եթէ մեր ձեռքին լինէր ստիպել Մանթաշեանին այդ քայլը չանել, մենք կասէինք նրան. գնա, կապիտալդ գործդիր Երևանի կամ Ղարաբաղի հայաբնակ նահանգներում և զուր տեղ պատճառ մի դարձիր վրացիների դժգոհութեան։

Եթէ հայ կապիտալիստը մեղաւոր է, որ գնում է վրացիների հողերը—թէև այդ դէպքերը բացառիկ են—աւելի մեղաւոր են վրացի կալուածատէրերը, որոնք վաճառում են իրանց հողերը։ Վերջապէս, թող վրաց ինտելիգենցիան աշխատէ հողային բանկեր ստեղծել և կազմակերպել գործն այնպէս, որ վրաց կալուածատէրերի հողերն անցնեն վրացի գիւղացիների ձեռքը, այլ ոչ օտարների սեփականութիւն դառնան։

Ուրեմն, երկրորդ մեղադրանքն ևս հայերի դէմ հիմնաւորված չենք նկատում, մանաւանդ որ բոլորովին սխալ է այն ենթադրութիւնը, թէ հայ կապիտալիստները գործում են հայ ինտելիգենցիայի ձեռքով մշակված ազգայնական ծրագրով։

Այդպիսի ծրագիր բնաւ չէ եղել և չը կայ։ Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Կ. Պօլսից հեռագրում են, որ Բ. Դուռը համաձայնեց, որպէսզի Վանում և Բիթլիսում պաշտօնեաների կէսը նշանակվեն հայերից։ Մնացած վիլայէթներում՝ Արևելեան Անատոլիայում՝ հայ և թիւրք պաշտօնեաների փոխյարաբերութիւնը որոշելու են գենեբալ-տեսուչները։ Բ. Դուռը պարտաւորվում է ձեռնպահ մնալ թիւրքերին խմբովին Արևելեան Անատոլիա գաղթեցնելուց։

—

Կ. Պօլսից հեռագրում են, որ Հայաստանի բարենորոգումների հարցը վճռված է վերջնականապէս։ Բ. Դուռը դիմել է մեծ պետութիւններին խնդրելով մատնանշել թեկնածուներ գեներալ տեսուչների պաշտօնների համար, որոնք ուղարկվելու են Անատոլիայի վիլայէթները։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
29 յունվարի

Պետերբուրգ. — Մարինսկի թատրոնում կայացաւ ներկայացում յօգուտ Կայսերական կանանց հայրենասիրական ընկերութեան դպրոցի։ Ներկայացմանը ներկայ էին Թագաւոր Կայսրը Օգոստափառ Դուստրների հետ, Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան և Մեծ Իշխաններն ու Մեծ Իշխանուհիները։

Խճողների գործի առաջին համառուսական համագումարը բաղդաւորվեց Բարձրագոյն հետեւեալ հեռագիրը ստանալով.

«Անկեղծօրէն շնորհակալ եմ համագումարից և ցանկանում եմ նրան արդիւնաւոր աշխատանք։ ՆԻԿՕԼԱՅ»։

Պետերբուրգ.—Արտասահման մեկնեց արձակուրդով երկրագործութեան գլխաւոր կառավարիչը։

Դումայական մամուլի ներկայացուցիչները դիմեցին Տաւրիկեան պալատում ներկայ եղող ծովային մինիստրին, հարց տալով նաւակառուցման մասին։ Մինիստրն ասաց, որ այս տարի օրէնսդրական հաստատութիւններին ներկայացվելու է յետագայ նաւակառուցման ծրագրի պլանը, որի իրականացման համար դրամ կը պահանջվի և՛ 1915 թ-ին և պահանջվելու է նաև հինգ տարի շարունակ։ Այն հարցին՝ թէ վնասակա՞ր չէ արդեօք, պետական շահերի համար, Պուտիլովեան գործարանում մեծ թւով օտարազգիների ներկայութիւնը, մինիստրը պատասխանեց, որ գործարանի ծառայողների թւում օտարազգիների ներկայութիւնը՝ անցանկալի երևոյթ է, սակայն ոչ մի վտանգ պետական շահերի համար չը կայ. այն ամենը, ինչ գաղտնիք է, չէ մշակվում գործարանում. գաղտնի մասերի պատրաստութիւնների մէջ օտարազգի ինժենէրները չեն մասնակցում. պէտք է նկատել, որ առանց օտարազգիների չէ կարող աշխատել Ռուսաստանում և ոչ մի մասնաւոր գործարան։

Սինօդը որոշեց յատկացնել յօգուտ Գալիցիայի և Բուկովինայի սովեալների 3000 ռուբլի կա։

Հէլսինգֆորս. — Կուպիօսի նահանգում այրվեց մի ապաստարան։ կրակին զոհ գնացին 5 մարդ, մինը կորաւ անհետանալ։ Շատերը ստացան այրուածքներ։

Ռիգա.—Գործադուլ արին Բեկէր և Ընկ. գործարանի բանւորները, նաև երկու կօշիկների գործարանների բանւորները։ Առաջադրված են անտեսական պահանջներ։

Պարիզ.—Պետերբուրգ մեկնեց Ֆրանսիական դեսպան Պալէօլոգը։

Ստոկհոլմ.—Արտակարգ գնացքներով եկան 1800 ուսանող երեք համալսարաններից թագաւորին հայրենասիրական զգացմունքներ արտայայտելու համար։ Ուսանողները դրօշակներով դիմեցին պալատի կողմը։ Երգվում էին հայրենասիրական երգեր։ Ուսանողական միութիւնների նախագահները լիակատար վստահութիւն արտայայտեցին միապետին։ Թագաւորը պատասխանեց զգացված ճառով, խնդրելով շվեդ երիտասարդութեանը օգնել իրան ուժեղ ու ազատ Շվեդիա ստեղծելու գործում։

Լվով.—Մի քանի հարիւր բանւոր ժողովվեցին քաղաքային վարչութեան առաջ և պատգամաւորութիւն ուղարկեցին փոխարքայի և քաղաքային վարչութեան՝ մօտ պահանջելով օգնել սովեալներին։ Քաղաքագլուխը հրամայեց տալ սովեալներին գեանախնձոր։ Երբ ոստիկանութիւնը մտադիր էր ցրել ժողովվածներին, ամբոխը յարձակվեց մթերատար սայլերի վրա և ջարդեց նրանցից մի քանիսը, զոհանալով ուտեստեղէնը։

Հռոմ.—Իտալիայի փաստաբանների մէջ ուժեղ ագիտացիա է մղվում քրէական դատավարութեան նոր կանոնագրութեան գործադրութեան պատճառով։ Կանոնագրութիւնը կարճում է դատաւորների և դատական քննիչների թիւը։ Մի քանի քաղաքներում փաստաբանները գործադուլ են արել։ Նէապոլում բոլոր փաստաբանները գործադուլ են արել։

Լիսաբոն.—Նոր կաբինետի ծրագիրը պարունակում է ամնիստիա առանձնապէս քաղաքական յանցագործութիւնների համար, նաև վերաքննութիւն եկեղեցին պետութիւնից անջատելու օրէնքի։

Օրուրա (Բոլիվիա).—Էսպուէլիտասի ուժանակի պահեստում պայթումից սպանվեցին և վիրաւորվեցին շատ մարդ։

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
29 յունվարի

Լօնդոն (ուշացած).—Համայնքների պալատի նիստը սկսվեց համարեա բոլոր պատգամաւորների ներկայութեամբ և մեծ յուզմունքի մէջ։ Կառավարական կուսակցութեան երկու անդամի ճառերից յետոյ, որոնք առաջարկեցին քննել գահական ճառին պատասխան ուղերձը, օպոզիցիայի անդամ Վալտէր Լօնգը առաջարկեց ուղղում մտցնել հօմրուլի հարցի առիթով։ Լօնգը յայտնեց, որ երկիրը առաջին անգամ, հարիւր տարիներից յետոյ, կանգնած է քաղաքացիական պատերազմի սպառնալիքի առաջ, ուստի օպոզիցիայի պարտականութիւն է խնդրել պալատից անյապաղ միջոցներ ձեռք առնել դրութեան առիթով։ Քաղաքացիական պատերազմը արդասիք կը լինի կառավարութեան քաղաքականութեան, եթէ վերջինս յամառի իր արդի ուղղութեան մէջ։ Ասկվիտը պատասխանեց, որ հօմրուլի բիլլն անցաւ կրկնակի, և եթէ ընդունվի երրորդ անգամ, կը դառնայ օրէնք։ Ընդհանուր ընտրութիւնները կարող են չը լուծել հօմրուլի հարցը, ուստի և լաւ է հարցը հարթել պալատում համաձայնութիւն կապելով։

Վիճաբանութիւններն ընթանում են հանդիսաւոր։ Զեմբերլէնը մատնանշում է, որ կառավարութիւնը ինքը պէտք է ելք գտնէ իր ստեղծած լուրջ դրութիւնից։ Քաղաքացիական պատերազմը կախված է կառավարութեան ասելիքից։

Վիճաբանութիւնները յետաձգվեցին։

Լօնդոն.—Լորդերի պալատ։ Լորդ Մէլէդոնը հարցնում է, թէ ինչ առաջարկութիւններ են արված Ուլստէրի հարցի առիթով կատարված բանակցութիւնների ժամանակ։ Կառավարութեան ներկայացուցիչ Լորդ Մորլէյը պատասխանեց, որ բանակցութիւնները պէտք է գաղտնի պահվեն։

Անսպասելի վիճաբանութիւններից յետոյ, նիստը փակվեց։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
29 յունվարի

Ցետինիէ. — Թագաւորը սկսուցչինան բանալիս արտասանեց գահական ճառ, որով երախտագիտութիւն յայտնեց կուսակցումներին նպաստողներին, որ Զերմօգորիան կարող է ձեռք մեկնել Սերբիային, որին ոչ մի բան չէ կարող բաժանել նրանից. ցաւակցեց Սկիւտարին զօրքերից դատարկելու առիթով։ Ճառի մէջ անհրաժեշտութիւն է յայտնված նոր նուաճված երկիրները լցնել գաղթականութեամբ և պահել նրանցում մշտական զօրք։ Արտաքին քաղաքականութեան նկատմամբ շեշտված է, թէ անհրաժեշտ է պահպանել առ հզօր Ռուսաստանը ունեցած տարաձիգոն հաւատարմութիւնը, ինչպէս և համերաշխ աշխատակցել Սերբիայի հետ։

Հռոմ.—Պրինց Վիդը թագաւորի հետ այցելեց հռոմէական ֆորումը։

Սոֆիա.—Ընդունելով ամերիկեան մասնաժողովին, թագաւորը ցանկութիւն յայտնեց այցելել եկող գարնան Ամերիկա, եթէ այդ հնարաւոր կը լինի քաղաքական դրութեամբ։

Հռոմ.—Պրինց Վիդը, որ երէկ այցելեց աւստրիական, գերմանական և ֆրանսիական դեսպանատները, այսօր այցելութիւններ գործեց ռուսաց և մեծ-բրիտանական դեսպաններին։ Կէսօրից յետոյ պրինցն այցելեց իտալական այրի թագուհուն։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
29 յունվարի

Տօկիո.—Ամբոխը փորձեց յարձակվել մի քանի լրագիրների խմբագրատների և ոստիկանատների վրա։ Բայց փորձերը չաջողվեցին։ Ընդհարման ժամանակ վիրաւորվեցին 7 մարդ. կալանաւորվեցին 150 հոգի։ Պատգամաւոր Կուրախարան ճառելիս գանկոծվեց։ Ոստիկանութիւնը վերականգնեց հանգստութիւնը։

Տօկիո.—Լրագիրների ասելով, կօրեացիները պատրաստվում են յարձակում գործել եաղօնական հիւպատոսարանի վրա։

Ֆորմօզայում կալանաւորվել են կրկին 700 հոգի։

Տօկիո.—Այսօր, պետութեան հիմնադրութեան օրը, պալատում կայսրի ներկայութեամբ կայացաւ նախաճաշ։ Ներկայ էին 600 մարդ։ Կայսրի ողջոյնի ճառին պատասխանեցին ռուսաց դեսպանը և պրեմիէրը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱԴՈՒԼՈՎ ԱԶԳԻ ՏՈՒՆԸ ՁԻ ՇԻՆՎԻ, ՍԻՐԵԼԻՆԵՐ

—

Մսավաճառների և... մեր ճեմարանի ուսանողների շաբաթ։

Գործադուլ և... դասադուլ...

Մսավաճառները ցանկանում են վաճառել միսը սակագնից բարձր գներով. քաղաքային վարչութիւնը արգելում է. և մսավաճառները պատժում են մեզ, փակելով իրանց խանութները, որպէսզի թողնեն մեզ առանց մսի... Ճեմարանի ուսանողները վճռեցին... արձակել պաշտօնից Բաղրատ սըրբազանին և հրաւիրել Սիրական Տիգրան Տեանին...

Հակառակ դէպքում նրանք պատժում են մեզ... հրաժարվելով յանձնել պարապմունքներին...

Նրանք փակում են աչքները, խցում են ականջները, հեռանում են դասարաններից, որ չը տեսնեն ուսուցիչներին, չը կարդան գրքեր, չը լսեն դասեր, չը լուսաւորվեն...

Դասադուլ...

Լինում են և յիմար խօսքեր։

Դասադուլը ամենայիմար խօսքն է, որից աւելի անմիտը դեռ չէ եղել, չը կայ...

Հրաժարվել լոյսի շողերից, ճշմարտութիւնից, արդարութիւնից, սիրել խաւար և մութ, նախադասել գիշերը ցերեկին, հոգու մաքրութիւնը՝ կեղտին, և այդ բոլորը մատաղ հասակում, երբ դեռ կեանքի դժուար պայմանները չեն դրել իրանց ծանր գրոշմը մարդու հոգու վրա... դա անհասկանալի է, անհասկանալի։

Պատճառնե՞րը։

Եթէ ասէին՝ թող հեռանայ Բագրատ եպիսկոպոսը, ես կը մտածէի, թէ գուցէ սըրբազանը մեղանչել է մատաղ սերնդի առաջ։

Բայց երբ պահանջում են, որ սրբազանը տեղը տայ Սիրական Տիգրանեանին, ինչքան էլ ես յարգէի, սիրէի Սիրական Տիգրանեանին, ես պիտի խոստովանեմ, որ ճեմարանի ուսանողները չափից, ամեն չափերից անցել են, կուրացել են։

Ասասէք, խնդրեմ, աշխարհի որ անկիւնում աշակերտին տրված է իրաւունք պահանջել, որ տեսուչը արձակվի և նրա տեղ նշանակվի այս-ինչ անձը։ Ո՞ր վարդապետութիւնը, թէկուզ ամենադեմօկրատիկ, արտօնում է ուսանողներին իրաւունք՝ հրաւիրել, նշանակել ուսուցիչներ, տեսուչներ։

Ինչու՞ այդ անիծեալ անկիւնը պիտի մերը լինի և ինչու՞ այդ նոր յիմար վարդապետութիւնը մեր միմոսները առաջինները մեղանում պիտի քարոզեն համարձակ։

Ես յարգում եմ Սիրական Տիգրանեանին, ուստի համարձակվում եմ հայ ժողովրդի անունից դիմել նրան հարցով. գիտէ՞ նա այն ազմուկը, որ հանում են նրա անուան շուրջը. եթէ գիտէ, արդեօք հաւանում է այդ դասադուլը և ինչու՞ շիտակ չէ յայտնում մամուլի միջոցով, որ ինքը հրաժարվում է գալ Էջմիածին իբր ճեմարանի տեսուչ այդպիսի պայմաններում ընտրված, հրաւիրված աշակերտներից...

Արդեօք ժխտում է Ս. Տիգրանեանը, որ միայն Վեհափառը կարող է հրաւիրել և արձակել տեսչին, և այն՝ ոչ ուրիշի առելովը, մանաւանդ սատովը և կամ՝ գլխաւորը՝ դասադուլովը կամ դասադուլերովը, այլ միայն իր խղճի և մտքի ազատ ձայնովը, իբր ազգի հոգու ծառայ, ազգի շահերը միշտ, անդադար և անսասան աչքի առաջ ունենալով...

Այսօր աշակերտները պահանջում են իրանց տեսուչ՝ Սիրական Տիգրանեանին։

Վաղը նրան չեն հաւանի և կը պահանջեն մի Տիգրան Սիրականեանի։

Ճեմարանը կրկէս չէ և ոչ աշակերտների խաղալիք։

Եթէ ազգը ծախսում է իր լումայն, եթէ ազգը հազար ու մէկ չարչարանքներով գլուխ է բերել և պահում է ճեմարան, աշակերտները պէտք է սովորեն, իսկ չը ցանկացողները պէտք է անմիջապէս հեռանան և արձակվեն...

Մի վայրկեան կարելի չէ թոյլ տալ կարծելու ումիկիցէ, որ աշակերտները իրաւունք ունեն պահանջել այս-ինչ կամ այն-ինչ կուսակցութեան, պարապել քաղաքականութեան հարցերով, մոռանալ, որ եկել են սովորելու, հարստացնելու իրանց խելքը և միտքը և ոչ թէ հրամայելու, անօրինելու և պահանջելու, զանազան արկածախնդիր պարոնների և հոգևորականների շահերին ծառայելու...

Ցիշում է՞ք այն մանուկներին, որ ցանկանում էին մօտենալ Քրիստոսին։ Մանուկներին արգելում էին, չէին թողնում։ Տեսաւ Քրիստոս և ուրախացաւ։ Թողէք, որ գան ինձ մօտ. նրանց համար է արքայութիւնը, ասաց Նա, և մանուկները շրջապատեցին Նրան սիրով...

Այսօր մեր փարիսեցիները, բաղդախնդիր և արկածախնդիր պարոնները և հոգևորականները, սուտ վարդապետութիւններով լցնում են մեր ուսանողների գլուխները և արգելում են, որ նրանք մօտենան իրանց Քրիստոսին՝ լուսաւորութեան։

Ամեն մի ազնիւ հայի պարքն է հանել այդ փարիսեցիների դիմակները, վանտել նրանց խարազաններով, որ հեռանան, քաշվեն և չարգելեն մանուկներին սիրել, ընդունել և իւրացնել լուսաւորութեան բոլոր գեղեցիկ շուքերը, որ մի օր այդ մանուկները՝ չափահասներ դարձած՝ կարողանան ամենայն սրբութեամբ տանել այդ շուքերը, տալ և տարածել այն ազգի մէջ, որ կարօտ է նրանց, միշտ մութի, միշտ խաւարի մէջ խարխափած, միշտ սպասելով իր փրկիչներին...

Իսկ այդ ապագայ փրկիչները այսօր դասադուլ են անում, խաղալիքներ դարձած զանազան պարոնների և հոգևորականների ձեռքերին...

Այդ պարոններին և հոգևորականներին, որ փորաքարշ սողում են օձերի նման ճեմարանի շուրջը, խոռնում, պղտորում մեր մանուկների անփորձ սրտերը և կարծես ետևից, թիկունքից մեր ազգին հարուածներ տալիս, մենք խնդրում ենք քաշվել իրանց անկիւնները և խուցերը և չարգելել, որ մեր մանուկները դառնան իրանց Քրիստոսին, որովհետև այդ մանուկների համար է երկնքի արքայութիւնը...

Այդ երկնքի արքայութիւնը ապագայ նրանց աշխարհի ասպարէզն է լայն, փշոտ, բայց գեղեցիկ, լուսաւոր և բեղնաւոր, արդար և ճշմարիտ՝ ազգին ծառայելու մինչև վերջին շունչը, արեան վերջին կաթիլը։

Դասադուլով կարելի է ազգի տունը քանդել։

Դասադուլով ազգի տունը չի շինվի, սիրելիներ... Գր. Զալխուշեան

ՍԻՕՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳԻՒՏԻ ԱՌԻԹՈՎ

—

«Մշակի» և «Հորիզոնի» մէջ մի քանի օր առաջ հ. Սիօն վարդապետ մի նամակ է տպագրել, որով իր ուրախութիւնը և հիացմունքն է յայտնում Հին-Նախիջևանում, «Երեք Խորան» կոչված հայոց եկեղեցում գտնված մի պատկերի մասին։ Վարդապետը իր գիւտն անուանում է «նոր Զիակոնդա», վստահ կերպով յայտարարելով, որ այդ գործը պատկանում է «Էէօնարդօ-դա-Վինչիին, կամ նրա աշակերտ Կորէջիոյին, ի հարկէ բերված ունիթօռների ձեռքով Շահ-Աբասի օրերում»։

Երևոյթը, ինչպէս տեսնում էք, իսկ որ հետաքրքրական է։

Մենք մի կողմից գովելով հ. Սիօնի աչալուրջ ուշադրութիւնը, միւս կողմից չենք կարող մեր զարմանքը չը յայտնել նրա այդչափ հեղինակաւոր կարծիքի մասին այդ տեսակ մի զուտ մասնագիտական խնդրում։

Մինչ փորձված դեղարուեստագէտ-պատմագէտները, եւրոպական նշանաւոր թանգարանների վերատեսուչները միանգամից դժուարանում են կլասիկ նորագիւտ գործերի նոյնիսկ դարը կամ դպրոցը ճշտօրէն որոշելու, չը վստահանալով ուղղակի հեղինակի անունը տալ, հ. Սիօնը շատ վստահ կերպով անուանում է նրան դա-Վինչիի կամ նրա աշակերտի վրձինի արդիւնք։ Շատ անգամ, երբ Վերածնութեան շրջանի անուանի վարպետների գործերից մի ծանօթ պատկեր է գտնվում, անագին դժուարութիւն է ծագում մինչև իսկ որոշելու թէ այդ գործը նոյն հեղինակինն է կրկնակ օրինակով, թէ մի ուրիշ վարպետ ընդօրինակողի։

Անշուշտ վաղուցեան է Հին-Նախիջևանի «Զիակոնդայի» մասին մի որոշ կարծիք յայտնել դեռ չը տեսած, բայց հ. Սիօնի նկարագրած Աստուածածնի, Մանուկ Յիսուսի և Յովսէփի այդ խրթանկարը յիշեցնում է մեզ դա-Վինչիի դպրոցի մի պատկերը՝ որ գտնվում է Պարիզում (Լուվր) ու կոչվում է Sainte Famille (սուրբ ընտանիք) և որի արտանկարը գտնվում է Պետերբուրգում (Էրմիտաժ) և կոչվում է «Святое семейство»։ Մեծութիւնը քիչ աւելի՝ Հին-Նախիջևանում գտնվող պատկերից։

Մենք չենք հակաճառում Սիօն վարդապետի հաւանական ենթադրութեան յիշեալ պատկերի Եւրոպայից Հայաստան բերվելու պարագաների մասին. ընդհակառակը մենք նոյնպէս հնարաւոր ենք համարում, որ ունիթօռները Հռոմից իրանց հետ բերած լինէին խաչական արուեստի այդ «սքանչելի Աստուածածինը», թէկուզ ոչ անպատճառ Շահ-Աբբասի օրերում. որովհետև նրանք 14-րդ դարից մինչև 18-րդ դար ամուր հաստատված [illegible] մեր երկրում և մշտական յարաբերութեան մէջ էին Հռոմի հետ։ Հին-Նախիջևանում եղել է նոյն իսկ ս. Աստուածածին եկեղեցի «Santa Maria Miuerva» անունով։

Աւելին կասենք. հ. Ղևոնդ Ալիշան իր «Սիսականի» մէջ մանրամասնօրէն խօսելով «Միաբանողաց» (ունիթօռների) մասին՝ մի քանի տեղ յիշատակում է նոյն իսկ, որ նրանցից ոմանք Հռոմից վերադառնալիս բերել են իրանց հետ սպասներ և այլ իրեր։

«Ի սմին յեւզնիսոսէ քահանայապետէ հաստատեցաւ յաթոռ Նախճաւանու յամի 1438 Մատթէոս Աւենիկեան (Avenicensis) մի ի... միաբանողաց, որ յետ երկար ամաց յուղևորութեան գալով՝ հիւանդացեալ վախճանեցաւ ի Կիպրոս կղզւոջ... յետ նորին յիշէ Յովհաննէս եպիսկոպոս ձեռնադրեալ ի Հռովմ առ Պիոսիս Բ. որ բաղում նուիրքք և սպասուք և քաջալերք յորդորմամբ առաքեաց զնա. (1462)։

«Յետ մահուան Բենեդիկտոսի ընտրեցին միաբանողքն (1510) զԳրիգոր, որդի Աստուածատրոյ, որ եկեալ ի Հռովմ... ձեռնադրեցաւ և բաղում սպասուք և թոշակաւ ճանապարհի դարձ արար յերկիր իւր և հովուեաց ցամն 1537»։

(«Սիսական» ԺԲ. էջ 390 – 1)

Անելով մեր այս փոքր դիտողութիւնը, հ. Սիօն վարդապետի հրապարակական նամակի մասին, մենք սպասում ենք, որ էջմիածինը խնամք կը տանի այդ պատկերի համար և կը ցուցադրէ մասնագէտների քննութեան։ Գ. Լևոնեան

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ *)

III

I համառուսական ժողովրդ. կրթութեան համագումարը

Դ.

Ս. Տիգրանեանի զեկուցումը

Կովկասեան ազգութիւնների դպրոցներին վերաբերող զեկուցումները սկսվեցին Սիրական Տիգրանեանի զեկուցումով, որի վերնագիրն էր՝ «ռուսահայ ազգաբնակութեան դպրոցական կարիքները»։ Ներկաներին ծանօթացնելու համար հայ ազգաբնակութեան ծառայող դպրոցներին, Ս. Տիգրանեանը հայոց ծխական դպրոցների հետ յիշեց և միխիտարեան տարրական դպրոցները, որոնք վերջին տարիներս ծնունդն են։ Հայոց ծխական դպրոցները Ռուսաստանում իրանց 100-ամեայ պատմութիւնն ունեն. նրանցից մի քանիսը իրանց երկրամեայ յոբելեաններն են տօնում. բայց հայոց ծխական ուսումնարանները իրանց երկարամեայ գոյութեան ընթացքում շատ յաճախ են ենթարկվել միխիտարեան յարձակումներին. մի քանի անգամ փակվել են դպրոցները, նրանց գոյքը յարքունիս են գրաւել, բայց վերջը վերադարձրել են։ Այն տեղերում, ուր կային հայոց դպրոցներ, մինչև 1870 թուականները միխիտարեանները չէր բանում նորերը. միայն այդ թուականից միխիտարեանները սկսում է մրցելու քաղաքականութիւն և դպրոցներ է բանում այն տեղերը, ուր կան հայոց ազգային ուսումնարաններ. որքան հայոց ծխական դպրոցները հարազատ են հայ ազգաբնակութեան, այնքան էլ միխիտարեան դպրոցները օտար են *)։ Շատ յաճախ միխիտարեանները նոր դպրոցներ չէր բանում, այլ գոյութիւն ունեցած հայոց դպրոցները վերածում էր պետականի. այս ուղղութեամբ աշխատել են մի շարք ժողովրդական դպրոցների վերատեսուչներ և նրանց բարձրացման մէջ մեծ նշանակութիւն է ունեցել, թէ քանի՛ նոր դպրոց են աւելացրել եղածներին՝ չը ծախսելով և ոչ մի զումար...

Ս. Տիգրանեանը երկար և համոզված խօսում է կառավարչական նպաստի մասին. Կովկասում զէստալօ չը կայ, բայց զեմսկի տուրք կայ. հայերն էլ են վճարում այդ տուրքը. այդ զեմսկի տուրքը մեծ մասամբ գնում է պետական դպրոցների օգտին. մինչդեռ հայոց ծխական դպրոցները պահպանվում են միայն հայ հասարակութեան հաշվով. նրանց հայ համայնքի դպրոցներն են. կառավարութիւնը պէտք է նպաստէ հայոց դպրոցներին։ Ներկայումս միխիտարութիւնը զրկելով հայոց դպրոցներն իր դրամական նպաստից՝ ցանկանում է զրկել և ուսուցիչներից, սկսել է պահանջել քաղաքական բարեյուսութեան վկայական. հայոց դպրոցներն ունեն իրանց կանոնադրութիւնը, որ ստացել է բարձրագոյն հաստատութիւն և որ այժմ փոփոխման է ենթարկվում։ Իշխանութիւնը իր դաւառական ճիւղերի միջոցով աշխատում է փակել հայոց դպրոցները և նրանց փոխարինել միխիտարականով. նախկին բազմաթիւ դպրոցներից այժմ կան միայն մօտ 400 հայոց ծխական դպրոցներ, 30,000 աշակերտներով և 1000 դասատուներով։ Որովհետև դրամական սղութիւնը խանգարում է հայոց դպրոցներին լայն չափով իրականացնել հայ մանուկների տարրական դաստիարակութիւնը, այդ պատճառով Ս. Տիգրանեան վերադառնում է իր արտայայտած ցանկութեանը և գտնում է, որ Պետական գանձարանը պէտք է նպաստէ հայոց ծխական համայնական դպրոցներին։ Միխիտարութիւնը տարրական կրթութիւնը չը պէտք է մենաշնորհ դարձնէ և ամբողջապէս իր ձեռքը վերցնէ. պէտք է թոյլ տալ, որ գոյութիւն ունենան և ազգային դպրոցներ։

1) Հայ ազգաբնակութեան լուսաւորման կարիքների աւելի լաւ բաւարարման տեսակէտից չը պէտք է դպրոցական գործը իբր առանձնաշնորհ՝ կենտրօնացնել միայն միխիտարեան կամ հայ համայնքի ձեռքը, այլ պէտք է թոյլ տալ և առաջինին և երկրորդին առաջադիմել և աշխատել ժողովրդի լուսաւորութեան ասպարէզում համազօր և ազատ մրցակցութեան պայմաններում, վերացնելով այն արգելքները, որոնք խոչընդոտ են հանդիսանում թէ միխիտարեան և թէ հայ համայնքի դպրոցների բարեկարգութեանը, աճմանը և կատարելագործմանը։

2) Հայոց համայնական տարրական դպրոցներին՝ լուսաւորութեան միխիտարեան դպրոցներին հաւասարաչափ՝ գանձարանից պէտք է բաց թողնել նպաստ, միայն այն կարևոր պայմանով, որ հայոց ծխական դպրոցները պահպանեն իրանց անկախութիւնը լուսաւորութեան միխիտարութիւնից և շարունակեն իրանց համայնական ինքնավարութիւնը։

3) Ժողովրդ. լուս. մինիստրութեան պատկանող դպրոցներում բոլոր առարկաների դասատուութիւնը պէտք է տարվի աշակերտների մայրենի լեզուով. ռուսաց լեզուն

*) Այստեղ մենք արձանագրում ենք միայն Ս. Տիգրանեանի զեկուցման համառօտութիւնը իր իսկ արտայայտութիւններով։ Գ. Ս.-Ռ.

*) Տես «Մշակ» № 21.

զգացման պակասութիւնն է հայի մէջ։

Կլուբ և ազգային ինքնասիրութիւն. ինչ կապ երկուսի մէջ։ Կապ կայ և մեծ կապ։ Այն հասարակութիւնը, որ ազգային ինքնասիրութիւն ունենալու չափ քաղաքակրթված է, կամայ թէ ակամայ, գիտակցաբար թէ անգիտակցաբար այդ սրբազան զգացումը արտայայտում է ամեն բանում, թէկուզ դա լինի ժամանցի համար նշանակված մի հասատութիւն։

Մեր ինքնուրոյնութեան միակ արտայայտիչը մեր գաղութներում տակաւին եկեղեցին է։ Այդ վատ չէ, ի հարկէ։ Բայց կը կամենայի իմանալ, թէ մինչև երբ մենք պիտի տիրացուների ազգ մնանք։ Ես սիրում եմ իմ մայրենի եկեղեցին և ստոր եմ համարում այն հային, որ դաւաճանում է նրան՝ ինչ պատճառով ևս լինի։ Բայց ես չափազանց կը վիրաւորվեմ, եթէ ինձ ասէք, թէ ես միայն կրօնով եմ հայ։

Մոսկվայի հայերը, շատ չնչին բացառութեամբ, միայն կրօնով են հայեր։ Ահա ինչու շատ անգամ մի քահանայի կամ տիրացուի ընտրութեան ողորմելի խնդիրը նրանց աւելի է յուզում, քան մայրենի լեզուի, մայրենի արուեստների, գրականութեան, թատրօնի և ուրիշ համանման խնդիրներ, որոնց հետ է կապված ազգային ինքնուրոյնութիւնը։

Ինձ թւում էր, որ ապրելով Ռուսաստանի մտաւոր կենտրօնում, Մոսկվայի հայ գաղութը խորապէս ազդված կը լինի ժամանակակից քաղաքակրթութիւնից։ Դրժբաղդաբար՝ ոչ։ Ես չեմ խօսում բացառութիւնների մասին։ Ընդհանրութիւնը ներկայացնում է տխուր, յուսահատեցուցիչ և հայի համար վերին աստիճանի ամօթալի պատկեր։

Ես չափազանցութիւն չեմ անում։ Ես միայն ընդգծում եմ մի ցաւալի իրողութիւն։ Ցաւալին այն չէ միայն, որ հայ լեզուն մեռնում է հայ գաղութի բերանում, հայ զգացումը չքանում հայ գաղութի սրտում։ Եթէ կորուստը փոխարինվէր մի յայտնի պլուսով, ապա կարելի էր մի կերպ հաշտվել դժբաղդութեան հետ։ Բայց Մոսկվայի հայը ներկայացնում է մի այլասերված տարր։ Նա ոչ ասիացի է, ոչ եւրոպացի, ոչ հայ է, ոչ ռուս։ Նա չը գիտէ ոչ մի լեզուով ուղիղ խօսել։ Նա աղաւաղում է օտար լեզուն աւելի, քան մայրենին։ Արտաքուստ, կարծես, նա քաղաքակրթվել է։ Բայց քերիը մի փոքր և տակը կը գտնես նոյն Թաթոսին, նոյն Մաթոսին, առանց սակայն Թաթոսի և Մաթոսի որոշ համակրելի յատկութիւնների։

— Ներեցէք, ես հայերէն լաւ չեմ խօսում,—լսում եմ ես ամեն մի քայլում։

Եւ ասողը ոչ միայն համալսարանականն է, այլ և թերուս վաճառականը, արհեստաւորը, գործակատարը և նորածիլ ուսանողը։

— Բայց, պարոն, դուք ռուսերէն էլ ուղիղ չէք խօսում,—նկատում եմ ես երբեմն, երբ հայերէն չիմացողը իր հայերէն չիմանալը շեշտում է մի տեսակ խուլ հպարտութեամբ։

Նա ապշած նայում է երեսիս։ Նա կարծում էր, թէ հասել է քաղաքակրթութեան գագաթին, մինչդեռ մի եկեղ գաւառացի նրան ոգէշ է համարում։

Տիրում է մի զարմանալի տանդանս—հեռանալ հայութիւնից և ձեռնալ օտար, ինչ գնով ևս լինի։ Ինձ թւում է, որ այստեղի հայը ուրախութեամբ կը փոխէր մինչև անգամ իր դէմքը, եթէ հնարաւոր լինէր։ Բայց ինչպէս բաց անել այդ փակ երեսները, ինչպէս փոքրացնել այդ խոշոր քթերը, ինչպէս ճերմակացնել այդ թուխ դէմքերը, ինչպէս իրարուց բաժանել այդ խառն ունքերը, վերջապէս՝ ինչպէս երկարացնել այդ կարճ պարանոցները։

— Ներեցէք, ես հայերէն չեմ խօսում։

Խեղճ ազգ, ինչ մի մեծ յանցանք ես գործել մարդկութեան դէմ, որ այսօր քո զաւակները չունեն քաջութիւն եթէ ոչ հպարտութեամբ, գէթ համարձակութեամբ ցոյց տալու իրանց ազգութիւնը օտարներին։ Խեղճ հայ լեզու, ինչ մի սոսկալի թոյն ես պարունակում քո մէջ, որ օտարութեան մէջ այնպիսի յամառութեամբ խորշում են քեզնից նոյնիսկ նրանք, որոնք ծանօթ են քեզ։

Ես միշտ քստմնել եմ այն հրէաներից, որոնք օտարներին դիւր գալու համար պարսաւում են իրանց, իրանց ցեղը, պատմելով նրա մասին հազար ու մի անվայել անեկդոտներ։

Ամաչում եմ ասել, որ հրէաների այդ գարշելի տիպը այսօր կազմակերպվում է և հայերի մէջ։ Եւ գլխաւորն այն է, որ իր ազգը օտարների մօտ ծաղրող տիպը ոչ միայն դիւրեկան չէ նոյն օտարների համար, այլ և զզվելի։ Պարսաւիր քո ազգը քաղաքակիրթ օտարի մօտ, պատմիր նրա մասին ամենասրամիտ անեկդոտներ, նա կը լսէ, կը ծիծաղէ անգամ, բայց իր հոգու խորքում կը ծաղրի և՛ քեզ։ Աւելի, նա քեզ կարհամարհէ, իբրև իր հարազատ մօր երեսին թքող մի զարշելի էակի։

— Ես հայերէն չը գիտեմ։

Ոչ, պարոն, քո թերութիւնը միայն այդ չէ։ Դու ազգա՛ ես, գռեհի՛կ, քաղաքակրթութիւնը միայն քո հագուստն է փոխել։ Դու ոչ միայն ազգային, այլ և անձնական ինքնասիրութիւն չունես. ահա քո դժբաղդութիւնը, ողորմելի արարած։ Դու չը գիտես, թէ օրքան ծաղրելի, օրքան զզվելի ես հէնց այն օտարների աչքում, որոնց այնքան շողում ես ու շողոքորթում, ստորացնելով քո ազգը։

Ես չեմ ասում, թէ դու պարտաւոր ես առանձապէս պարծենալ քո ազգութեամբ և փքել նրա արժանաւորութիւնները։ Քաջ լինցի, պարծենկոտութիւնը նոյնքան զզվելի է, որքան ինքնատոր ցուցումը։ Դու միայն մի ամաչիր քո ծագումից, եթէ ունես մաքաչափ ինքնասիրութիւն։ Մի մոռանար, որ մարդու գլխաւոր արժանաւորութիւնը իր ինքնուրոյնութեան մէջ է։ Մի մոռանար, որ օտարը երբէք քեզ իրը չի համարի, եթէ դու հրաժարվես քո սեփականից։ Դու միշտ կասկածելի կը մնաս նրա աչքում, որովհետև ունեցածները միշտ և ամենուրեք կասկածելի են։

Նայիր, կան հայերից աւելի փոքր, աւելի պակաս քաղաքակիրթ, գուցէ աւելի դժբաղդ ազգեր, տես որպիսի համբերութեամբ են կրում իրանց խաչը։ Եւ ո՞րն է նրանց զաւակներից հպարտութեամբ գոռում.

— Ես չը գիտեմ իմ մայրենի լեզուն։

Ոչ մէկը, գուցէ բացի հրէաներից, որոնք չունեն էլ մայրենի լեզու։

Շիրվանզադէ

Մոսկվա, 21 յունվարի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՑԻՑ

IV

Անցեալ իմ գալովս Մոսկվայում տեսայ մի վայր, ուր տեղական հայերը մերթ ընդ մերթ հանդիպում էին իրարու և ժամանակ անց կացնում։

Կոչվում էր այդ վայրը Մոսկվայի Հայկական Կրուժօկ։ Եկեղ հայը, եթէ ցանկանում էր, այնտեղ էր տեսնում իր հայրենակիցներին։

Ճշմարիտ է, այդ ժողովարանի անդամների և այցելուների թիւը, տեղական գաղութի քանակութեան համեմատ, շատ փոքր էր։ Ճշմարիտ է, այնտեղ ևս հայ լեզուն շատ հազիւ էր հնչում, ինչպէս առհասարակ Մոսկվայի բոլոր հայ շրջաններում, սկսած ուսանողութիւնից մինչև բուրժուազիան։ Բայց և այնպէս ժողովարանը կար և կարելի էր յուսալ, որ մի օր նա կը դառնայ մի տեսակ հասարակական հաստատութիւն, քանի որ ուրիշ աւելի լաւը չը կայ։

Այժմ այդ ժողովարանը գոյութիւն չունի։ Նա փակվել է։ Ինչո՞ւ։ Ասել, թէ նիւթական պակասութեան պատճառով, կը նշանակէ վիրաւորել Մոսկվայի հայերին, որովհետև նրանք հարուստ են։ Վերագրել կուսակցական այն զազրելի խնդիրներին, որ ամենուրեք ժանգոտել են հայի հոգին, նոյնպէս չեմ վստահանում, որովհետև Մոսկվայի հայ գաղութը ես այդքան էլ կրքոտ ու տհաս չեմ համարում։

Պատճառն իմ կարծիքով աւելի արմատական է։ Դա ազգային ինքնասիրութեան զգացման պակասութիւնն է հայի մէջ։

Կլուբ և ազգային ինքնասիրութիւն. ինչ կապ երկուսի մէջ։ Կապ կայ և մեծ կապ։ Այն հասարակութիւնը, որ ազգային ինքնասիրութիւն ունենալու չափ քաղաքակրթված է, կամայ թէ ակամայ, գիտակցաբար թէ անգիտակցաբար այդ սրբազան զգացումը արտայայտում է ամեն բանում, թէկուզ դա լինի ժամանցի համար նշանակված մի հասատութիւն։

Մեր ինքնուրոյնութեան միակ արտայայտիչը մեր գաղութներում տակաւին եկեղեցին է։ Այդ վատ չէ, ի հարկէ։ Բայց կը կամենայի իմանալ, թէ մինչև երբ մենք պիտի տիրացուների ազգ մնանք։ Ես սիրում եմ իմ մայրենի եկեղեցին և ստոր եմ համարում այն հային, որ դաւաճանում է նրան՝ ինչ պատճառով ևս լինի։ Բայց ես չափազանց կը վիրաւորվեմ, եթէ ինձ ասէք, թէ ես միայն կրօնով եմ հայ։

Մոսկվայի հայերը, շատ չնչին բացառութեամբ, միայն կրօնով են հայեր։ Ահա ինչու շատ անգամ մի քահանայի կամ տիրացուի ընտրութեան ողորմելի խնդիրը նրանց աւելի է յուզում, քան մայրենի լեզուի, մայրենի արուեստների, գրականութեան, թատրօնի և ուրիշ համանման խնդիրներ, որոնց հետ է կապված ազգային ինքնուրոյնութիւնը։

Ինձ թւում էր, որ ապրելով Ռուսաստանի մտաւոր կենտրօնում, Մոսկվայի հայ գաղութը խորապէս ազդված կը լինի ժամանակակից քաղաքակրթութիւնից։ Դրժբաղդաբար՝ ոչ։ Ես չեմ խօսում բացառութիւնների մասին։ Ընդհանրութիւնը ներկայացնում է տխուր, յուսահատեցուցիչ և հայի համար վերին աստիճանի ամօթալի պատկեր։

Ես չափազանցութիւն չեմ անում։ Ես միայն ընդգծում եմ մի ցաւալի իրողութիւն։ Ցաւալին այն չէ միայն, որ հայ լեզուն մեռնում է հայ գաղութի բերանում, հայ զգացումը չքանում հայ գաղութի սրտում։ Եթէ կորուստը փոխարինվէր մի յայտնի պլուսով, ապա կարելի էր մի կերպ հաշտվել դժբաղդութեան հետ։ Բայց Մոսկվայի հայը ներկայացնում է մի այլասերված տարր։ Նա ոչ ասիացի է, ոչ եւրոպացի, ոչ հայ է, ոչ ռուս։ Նա չը գիտէ ոչ մի լեզուով ուղիղ խօսել։ Նա աղաւաղում է օտար լեզուն աւելի, քան մայրենին։ Արտաքուստ, կարծես, նա քաղաքակրթվել է։ Բայց քերիը մի փոքր և տակը կը գտնես նոյն Թաթոսին, նոյն Մաթոսին, առանց սակայն Թաթոսի և Մաթոսի որոշ համակրելի յատկութիւնների։

— Ներեցէք, ես հայերէն լաւ չեմ խօսում,—լսում եմ ես ամեն մի քայլում։

Եւ ասողը ոչ միայն համալսարանականն է, այլ և թերուս վաճառականը, արհեստաւորը, գործակատարը և նորածիլ ուսանողը։

— Բայց, պարոն, դուք ռուսերէն էլ ուղիղ չէք խօսում,—նկատում եմ ես երբեմն, երբ հայերէն չիմացողը իր հայերէն չիմանալը շեշտում է մի տեսակ խուլ հպարտութեամբ։

Նա ապշած նայում է երեսիս։ Նա կարծում էր, թէ հասել է քաղաքակրթութեան գագաթին, մինչդեռ մի եկեղ գաւառացի նրան ոգէշ է համարում։

Տիրում է մի զարմանալի տանդանս—հեռանալ հայութիւնից և ձեռնալ օտար, ինչ գնով ևս լինի։ Ինձ թւում է, որ այստեղի հայը ուրախութեամբ կը փոխէր մինչև անգամ իր դէմքը, եթէ հնարաւոր լինէր։ Բայց ինչպէս բաց անել այդ փակ երեսները, ինչպէս փոքրացնել այդ խոշոր քթերը, ինչպէս ճերմակացնել այդ թուխ դէմքերը, ինչպէս իրարուց բաժանել այդ խառն ունքերը, վերջապէս՝ ինչպէս երկարացնել այդ կարճ պարանոցները։

— Ներեցէք, ես հայերէն չեմ խօսում։

Խեղճ ազգ, ինչ մի մեծ յանցանք ես գործել մարդկութեան դէմ, որ այսօր քո զաւակները չունեն քաջութիւն եթէ ոչ հպարտութեամբ, գէթ համարձակութեամբ ցոյց տալու իրանց ազգութիւնը օտարներին։ Խեղճ հայ լեզու, ինչ մի սոսկալի թոյն ես պարունակում քո մէջ, որ օտարութեան մէջ այնպիսի յամառութեամբ խորշում են քեզնից նոյնիսկ նրանք, որոնք ծանօթ են քեզ։

Ես միշտ քստմնել եմ այն հրէաներից, որոնք օտարներին դիւր գալու համար պարսաւում են իրանց, իրանց ցեղը, պատմելով նրա մասին հազար ու մի անվայել անեկդոտներ։

Ամաչում եմ ասել, որ հրէաների այդ գարշելի տիպը այսօր կազմակերպվում է և հայերի մէջ։ Եւ գլխաւորն այն է, որ իր ազգը օտարների մօտ ծաղրող տիպը ոչ միայն դիւրեկան չէ նոյն օտարների համար, այլ և զզվելի։ Պարսաւիր քո ազգը քաղաքակիրթ օտարի մօտ, պատմիր նրա մասին ամենասրամիտ անեկդոտներ, նա կը լսէ, կը ծիծաղէ անգամ, բայց իր հոգու խորքում կը ծաղրի և՛ քեզ։ Աւելի, նա քեզ կարհամարհէ, իբրև իր հարազատ մօր երեսին թքող մի զարշելի էակի։

— Ես հայերէն չը գիտեմ։

Ոչ, պարոն, քո թերութիւնը միայն այդ չէ։ Դու ազգա՛ ես, գռեհի՛կ, քաղաքակրթութիւնը միայն քո հագուստն է փոխել։ Դու ոչ միայն ազգային, այլ և անձնական ինքնասիրութիւն չունես. ահա քո դժբաղդութիւնը, ողորմելի արարած։ Դու չը գիտես, թէ օրքան ծաղրելի, օրքան զզվելի ես հէնց այն օտարների աչքում, որոնց այնքան շողում ես ու շողոքորթում, ստորացնելով քո ազգը։

Ես չեմ ասում, թէ դու պարտաւոր ես առանձապէս պարծենալ քո ազգութեամբ և փքել նրա արժանաւորութիւնները։ Քաջ լինցի, պարծենկոտութիւնը նոյնքան զզվելի է, որքան ինքնատոր ցուցումը։ Դու միայն մի ամաչիր քո ծագումից, եթէ ունես մաքաչափ ինքնասիրութիւն։ Մի մոռանար, որ մարդու գլխաւոր արժանաւորութիւնը իր ինքնուրոյնութեան մէջ է։ Մի մոռանար, որ օտարը երբէք քեզ իրը չի համարի, եթէ դու հրաժարվես քո սեփականից։ Դու միշտ կասկածելի կը մնաս նրա աչքում, որովհետև ունեցածները միշտ և ամենուրեք կասկածելի են։

Նայիր, կան հայերից աւելի փոքր, աւելի պակաս քաղաքակիրթ, գուցէ աւելի դժբաղդ ազգեր, տես որպիսի համբերութեամբ են կրում իրանց խաչը։ Եւ ո՞րն է նրանց զաւակներից հպարտութեամբ գոռում.

— Ես չը գիտեմ իմ մայրենի լեզուն։

Ոչ մէկը, գուցէ բացի հրէաներից, որոնք չունեն էլ մայրենի լեզու։

Շիրվանզադէ

Մոսկվա, 21 յունվարի

եթէ նա սակայն ինքը չը դիմէր անարժան միջոցի, հնարելով թէ իբր ընկերները իրան հեռագիր էին ուղարկել, բայց ինքը չէր հասկացել գործի էութիւնը։ Պէտք է ընդունել, որ այդ ընկերները, յամենայն դէպս գրագէտ մարդիկ, եզովբոսեան լեզուով չէին գրել հեռագիրը, որ նա չը հասկանար. երկրորդ, եթէ կար իր ընկերներից այդպիսի մի հեռագիր, ինչու նա մեզ ուղղած իր հեռագրի մէջ ոչ մի յիշատակութիւն չարեց, այլ կըռուկ կերպով յայտնեց՝ «ոչ մի յօդուածի տակ չեմ ստորագրել»։ Գալով ինդրի էտիկական կողմին, մեզ անհասկանալի է մնում այս հեռագրի մէջ, թէ արդեօք նա՝ Վ. Տէրեանը դատապարտում է միայն մե՞ր յարձակումները Յ. Թումանեանի դէմ, թէ և՛ սրա յարձակումները մեր դէմ, այլապէս նա ևս դառնում է ընկեր Մակինցեանի և Խանզադեանի, որոնք գրական էտիկայի պահպանութիւնը պալատիր են համարում ուրիշների կողմից նրա՝ Թումանեանի վերաբերմամբ, բայց ոչ նրա կողմից ուրիշների վերաբերմամբ։

Եւ որովհետև փաստերն իրանք խօսում են և ընթերցողը կը կարողանայ այդ փաստերի հիման վրա անել իր եզրակացութիւնը, սրանով վերջ ենք դնում այս հարցին, յայտնելով սակայն, որ ոչ թէ երեք ընկերների համակրութիւնը, այլ ամբողջ աշխարհի համակրութիւնն էլ անկարող կը լինի մեզ յետ պահել մերկացնելու և հրատարակութեան տալու այն տգեղ փաստերը, որ մենք ունենք մեր ձեռքի տակ Յ. Թումանեանի դէմ, իբրև մարդի և ոչ իբրև բանաստեղծի։

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Խուզարկութիւն

Մեղրի, 26 յունվարի

Ամսիս 20-ին Զանգեզուրի 4-րդ մասի ոստիկանական պրիստաւը Վանք գիւղը գնալով, մի քանի սարժենիկներով, 4 տուն խուզարկութեան է ենթարկել։ Խուզարկված տներից մէկում գտնվել է մի մաուզէր ու մի բերդան հրացան, միւսում՝ մի բերդան հրացան իր փամփուշտներով. երրորդ տանը մի չամախլու ատրճանակ և մի դաշոյն արծաթապատ պատեանով, իսկ չորրորդ տանը ոչինչ չէ գտնվել։

Ե. Վարդանեան

Յ. Սպէնդիարը Սիմֆերոպոլում

Սիմֆերոպոլ, 22 յունվարի

Յունվարի 16-ին տեղս ժամանեց իրաւաբան պ. Յովհ. Սպէնդիարը, որ եկել էր մի 5—6 օրով։ Նա որպէս հասարակական գործիչ հետաքրքրվեց տեղիս հայերի կուլտուրս կան հասարակական կեանքով։ Որքան մենք իմացանք, նա հեռացել է այստեղից՝ վատ տպաւորութիւն ստացած։ Նրա գալը որոշ թարմութիւն մտցրեց տեղիս՝ հասարակական կեանքով հետաքրքրվող շրջաններում։ Իմանալով Յ. Սպէնդիարի գալը՝ մեր հասարակական գործիչներն անմիջապէս խորհրդակցական ժողով գումարեցին և մի շարք՝ տեղիս համար հրատապ հարցերի շուրջը մտքերի փոխանակութիւն ունեցան։

Այս առիթից օգտվելով՝ ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը ևս հրաւիրեց խորհրդակցական ժողով մասնակցութեամբ Յ. Սպէնդիարի, «Մրժեռնակի» հանգուցեալ անմահ հեղինակ՝ Գ. Դօղոխեանի յուշարձանի մասին խորհրդակցելու։ Յ. Սպէնդիարը՝ խօսելով հա՝ գուցեալի գրական և մանկավարժական գործունէութեան մասին և դրատեալով նրա արժանիքները և հանգուցեալի յիշատակը յարգած լինելու համար՝ հետևեալ առաջարկութիւններն արեց. 1) Արձան կանգնեցնել հանգուցեալի գերեզմանի վրա, 2) Հանգուցեալի մեծադիր պատկերը կախել դպրոցում, 3) Գր.-ընթերցարանում մի պահարան յատկացնել հանգուցեալի անուան։ Խորհրդակցական ժողովի որոշումը դպրոցի հոգաբարձութեան նախագահ՝ բժ. Յ. Քաջայեանի միջոցով պիտի դարձվի առաջիկայ ծխ. ժողովի քննութեան հարց։

Համօ

Զանազան լուրեր

Սղնախ, 27 յունվարի

Ժողովրդական դպրոցների վերատեսչի կարգադրութեամբ օրիորդաց Մարինակի դպրոցում պարապմունքները վերջանում են ժամը 12-ին, որից յետոյ գալիս են քաղաքային այրված դպրոցի աշակերտները և օրիորդաց դպրոցում սովորում։

Կալանաւորված է մի լեզգի, որի մօտ գտել են քաղաքային դպրոցի տեսչի մի քանի մնային իրերը։ Տեսուչը ընակվում էր դպրոցում։ Հրդեհի աղէտալի գիշերը դպրոցում եղել է տօնածառ։

Նախկին գործակալ Եղիշէ քահանայ Տէր-Աստուածատրեանը ծախսել էր բաւականաչափ աթոռահաս փողերը, որի պատճառով որպէս պատիժ՝ առաջնորդը մինչև գործի քննութիւնը տեղափոխեց նրան աջ դասից ձախ դասը։

Տարօրինակ ձևով է. ձիւն չը կայ։ Դաշտերում երևացել են դաշտամկներ։ Զորային արհայրն եղանակը անշուշտ վատ ազդեցութիւն կունենայ առաջիկայ բերքի վրա։

Ն. Ն.

Թեմական տեսուչ մեզանում

Ղաթարի հանքեր, 20 յունվարի

Յունվարի 14-ին, Աւաքարից Շրվենանց է ժամանել թեմ. տեսուչ Յ. Դէորգբէգեանը, 16-ի գիշերը նոյն դպրոցի շէնքում ծխ. ժողով է գումարել և ժամանակաշրջանը լրացած ծխ. հոգաբարձուների փոխարէն ընտրել նորերը առաջիկայ եռամեակի համար։ Ժողովրդականները միաձայն համաձայնութեամբ վերընտրել են ծխ. հոգաբարձուներ՝ Ա. Տէր-Մարգարեանին, Մ. Տէր-Մարգարեանին և Մ. Ղազարեանին, իսկ անձնափոխանորդներ՝ Վ. Պետրոսեանին և Խ. Տէր-Մարգարեանին։ Ժողովուրդը նոյն ժողովում ընտրել է և վերաստուգիչ յանձնաժողովի անդամներ՝ Գ. Տէր-Վարդանեանին և Յ. Շահբազեանին, վերջիններիս տալով լիազօր իրաւունք տարեկան մի քանի անգամ ստուգելու թէ երեցփոխի և թէ ծխ. հոգաբարձուների հաշիւները։

Տեսուչը երեք օր մնացել է Շրվենանցի դպրոցում, լսել դասերը և 16-ի երեկոյեան անցել հարևան Առաջաձորի դպրոցը, որ տեղից հաւանական է, որ նա կանցնի Կաւարտ, Պառաւաթումբ և ուրիշ գիւղեր։

Կ. Շ.

Հրդեհը Դանձակում

Դանձակ, 26 յունվարի

Քաղաքումս վերջին տասն օրվայ մէջ երրորդ հրդեհն է պատահում. առաջին երկուսը պատահեց հայոց քաղաքամասում, իսկ վերջին երրորդը՝ առաջին քաղաքամասումն. հրապարակի վրա շինված յիսունից աւելի փայտէ խանութները, որ «Կանանչեղէնի շարք» էին կոչվում, երէկ երեկոյեան ժամը 8-ին, երբ խանութպանները նոր փակել տուն էին վերադարձել, անյայտ պատճառից վառվում են և մի քանի րօպէում հրդեհվում է ամբողջ շինութիւնը, միջի բոլոր ապրանքներով։

Շինութիւնը պատկանում է քաղաքին և, ինչպէս լսում ենք, ապահովագրված է. իսկ խեղճ խանութպանների բոլոր եղած չեղածը այրվեց մոխիր դարձաւ, որից ոչինչ չը կարողացան ազատել, շնորհիւ հրդեհաշէջների բացակայութեան։

Խեղճերը ազի արտասուքով մի գլուխ «пожарная-команда» էին բղաւում՝ յոյս ունենալով որ սա կը գայ և կը փրկէ իրանց այրվող ապրանքները. բայց հրշէջ խումբը չը կար ու չը կար...

Անցաւ մի քանի ժամ. երբ հրդեհը վերջանալու վրա էր, եկաւ մի կառք, որի մէջ դրած էր մի ջրհան. նրանից կէս ժամ անց՝ բերին ջրի մէկ դատարկ տակառ, և երկու մշակներ մէկ մէկ դոյլեր ձեռներին. ահա այդ էր մեր Դանձակում հրդեհաշէջների խումբը, որի փրկութեանը ժամերով սպասում էին... բայց ի զուր։

Բարեբաղդաբար քամի չը կար. եթէ փոքր ինչ քամի լինէր, համարեա ամբողջ շուկան կայրվէր։

Այրված խանութների վնասները տասնեակ հազարների են հասնում։

Սիմեցի

ՊԵՂԻՄՆԵՐԻ ԿԱՐՕՏ ՄԻ ՎԱՅՐ

(Մեր հնագէտների ուշադրութեանը)

Շուշի, 15 յունվարի

Շուշու գաւառը բացի նրանից որ իր ընութեան գեղեցկութեամբ հետաքրքրական է, հնագիտական և երկրաբանական հետազօտութիւնների ու ուսումնասիրութիւնների համար էլ մեծ ու բազմակողմանի նիւթ է պարունակում իր մէջ։

Այս գաւառի Նոգի գիւղը արժանի է ուշադրութեան իր հինաւուրց Բաղրխան ի վանքով, հին հեթանոսական ու քրիստոնէական գերեզմանատներով, աւերակ մատուռներով և այլն։ Ղաւախան գիւղը իր Շօշկայ վանքով, Հաղարծին ս. Գրիգոր Լուսաւորչի վանքով, Հաց գիւղը մեր պաշտելի ս. Մեսրոպի անունով հիմնած պատմական խորհրդաւոր վանքով ու Աղուանից Վաչագան թագաւորի պալատի երկու հսկայական պատերի մնացորդներով։ Այս գաւառը առաւել ևս հետաքրքրական է դառնում այսօր, երբ տեսնում ենք նրա սարերը, դաշտերը և ձորերը լի հազարաւոր տարիներից ի վեր մնացած քարացած ծովային կենդանիներով։

Անցեալ տարի ես իմ ուսուցչութեան ժամանակ Նոգի գիւղում հանդիպեցի մի քանի քարացածների, որոնք դուրս էին թափվել հողի միջից մի գիւղացու բանջարանոցում՝ նրա քանդելու ժամանակ։ Այս հանգամանքին ուշադրութիւն դարձնելով՝ ամեն օր դասերից յետոյ բրիչն ու բահը աշակերտներիս ձեռքը տալով շտապում էի շրջակայքը քարացածներ որոնելու, որը միշտ պսողվում էր. ամեն օր վերադառնում էի մի քանի քարացածներ լինձ հետ բերելով։ Գտնվել են մեծ ու փոքր ամմոնիտներ, բազմազան խխունջներ, ծովային ողնիներ, բելեմնիտներ և այլն։

Կովկասեան պատմական թանգարանի վերատեսուչ գնդապետ Կազնակովը, որին ես անձամբ յայտնել եմ սրա մասին, խոստացել էր դեռ անցեալ տարվայ սեպտեմբեր ամսին գալու այս գաւառը հետազօտութիւնների համար և մինչև այսօր դեռ չէ եկել։ Հնաւէր Երուանդ Լալայեանն էլ մի քանի տարի առաջ եկել էր այս գաւառը և թռուցիկ հայեացք ձգել ու հեռացել, անտեղեակ մնալով որ այս գաւառը ուսումնասիրութեան համար հետաքրքրական է։

Վերջացնելով խօսքս, ցանկալի է, որ Շուշու գաւառը, որն այսքան հարուստ է հնութիւններով, այսուհետև գոնէ մասնագէտների ուշադրութեան առարկայ դառնար և հարկաւոր հետազօտութեան ենթարկվէր։

Ստ. Շերմազանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, ցերեկվայ ժամը 2-ին, ռուս նշանաւոր բանաստեղծ Գրիբոէդովի դամբարանի վրա կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ նրա մահվան 85-ամեակի լրման առիթով։ Անգին բազմութիւն էր բարձրացել ս. Դաւիթի սարը։ Հոգեհանգիստն ներկայ էին քաղ. վարչութեան անդամները, ինտելիգենցիայի, մամուլի, կուլտուրական և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։ Ներկայ էր նաև նահանգապետը։ Քաղաքային վարչութեան, ռուսաց դիւանական խմբի և ռուսաց կլուբի կողմից դամբարանի վրա դրվեցին դափնեայ պսակներ։ Եղանակն ուղղակի սքանչելի էր։ Ի նկատի ունենալով որ Գրիբոէդովի դամբարանը անխնամ մնալով անշուքացել է, քաղաքային վարչութիւնը որոշել է բաց թողնել 300 ր. դամբարանը կարգի և շուքի բերելու։

◆ Մենք ստացանք Թաւրիզից, Ջուլֆայի վրայով, հետևեալ հեռագիրը «Մշակ» թերթի խմբագրութիւնից, խփված յունվ. 29-ից. «Հեռագրեցինք Ամենայն Հայոց Կաթողիկոսին. «Հոգու ամենաբուռն ցաւամբ և դառնագին վրդովմամբ բողոքում ենք էկսվարդապետ Դլտճեանին ըստ միջնորդութեանց վերստին միաբան ընդունելու խոստման դէմ. միանում ենք միաբանների արդարացի բողոքին. խնդրում ենք խափանել Նիկոլ Թօրոսովիչեան նոր դէպքերի ապագա կործան կրկնութիւնը»։

◆ Ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ կիրակի, փետրվարի 2-ին, Ժողովրդական Տան մէջ կը կայանայ ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Օրակարգի խնդիրներն են. 1) Վարչութեան և վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումները. 2) 1912—1913 թ. ուսումնական և ֆինանսական հաշիւների ընթերցումը և քննութիւնը. 3) Վարչութեան անդամների լրացուցիչ ընտրութիւնը։

◆ Քաղաքային նոր սպանդանոցի վարչութիւնը կազմվեց այսպէս. տնօրէն՝ իշխ. Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկ, աւագ տեխնիկ՝ Օհանջանեան, վերահսկիչ՝ պաշտօնաթող գնդապետ Եգիսով, աւագ անասնաբոյժ՝ Լանգ։

◆ Ռուսաց առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութիւնը դրգռնում է Պարսկաստանի հետ առևտուր անող վաճառականների ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ մանուֆակտուրային և այլ ապրանքները Ռուսաստանից ուղարկվում են լաւ չը փաթաթված։ Այդ բաւական վնաս է պատճառում պարսկական վաճառականներին, որոնք յաճախ այդ իսկ պատճառով չեն գնում ռուսական ապրանք։

◆ Յունվ. 28-ին իշխ. Ն. Ե. Արղութեան-Երկայնաբազուկի նախագահութեամբ կայացաւ քաղաքային տնտեսական մասնաժողովի նիստը մսի սակագինը փոխելու հարցի համար։ Քննելով անասունների վերջին գները, մասնաժողովը եկաւ այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է աւելացնել սակագինը։ Վերջնականում սակագինը որոշվեց այսպէս. տաւարի մսի ֆունտը 13 կոպէկի փոխարէն 14 կոպէկ, ոչխարի մսի ֆունտը 15 կոպէկի փոխարէն 17 կոպէկ, գոմէշի մսի ֆունտը 8 կոպէկի փոխարէն՝ 9 կոպէկ։ Մնացած մսագործները մնաց մասվաճառներին անելու են 20 կոպէկ զիջում պուդին։ Տեսնենք սրանից յետոյ ագահ մսագործները չե՞ն շահագործի ազգաբնակութեանը՝ վաճառելով միսը կամայական գներով։ Իրա՝ ազգաբնակութեան պարտականութիւնն է այդպիսի ամեն մի դէպքում անմիջապէս հրաւիրել ոստիկան և կազմել արձանագրութիւն յանցաւոր մսագործներին դատական պատասխանատուութեան ենթարկելու համար։

◆ Զուլֆա-Թիֆլիս երկաթուղագծի վրայից՝ յունվարի 28-ից Ալ. Պարզեանը մեզ գրում է հետևեալը. «Գարեգին վարդ.-ի կորցրած արկղը գտել եմ «Ալագեազ» կայարանում անկորուստ։ «Անի» կայարանի պետի ներկայութեամբ խոստացվեց անպայման և անվարձ վերադարձնել կորուսան իր տերոջ»։

◆ Յունվարի 28-ին Արտիստական թատրոնում տեղի ունեցաւ Ավերչէնկոյի երկրորդ ներկայացումը, որ իր ներկայութեամբ պատուեց կոմսուհի Ելիզավետա Անդրեեվնա Վորոնցովա-Դաշկովան։

◆ Դումային զեկուցագիր է ներկայացված ուղարկելու մի պատգամաւոր Թիֆլիսի կողմից, որպէսզի նոր երկաթուղիների մասնաժողովում պաշտպանէ Կովկասեան լեռնաշղթայով երկաթուղագիծ անցկացնելու միջնորդութիւնը։

◆ Վաղը Բժշկական Ընկերութեան մէջ ի թիւս այլ զեկուցումների կը լինի նաև մի զեկուցում նորածիններին արհեստական նապէս կերակրելու մասին։

◆ Թիֆլիս է գալու մի քանի դասախօսութիւններ կարդալու համար յայտնի գրող Գ. Պետրովը։

◆ Մեզ խնդրում են բարեգործ անձերի և հիմնարկութիւնների ուշադրութիւնը հրաւիրել շուշեցի մի աղքատ և ծայրայեղ կարօտ ընտանիքի վրա, որ բաղկացած է մօրից (այրի) և 4 մանկահաս երեխաներից, որոնցից ամենամեծը՝ 13 տարեկան օրիորդ։ Ցիշեալ ընտանիքը զրկվել է թէ հօրից և թէ իր բոլոր ունեցուածքից հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Շուշում։ Օգնել ցանկացողներին խնդրում են դիմել հետևեալ հասցէով. Թիֆլիս, Բեթղեհէմի փողոց, № 1, տուն Յարութիւնեանի, տ. Ն. Աստուածատրեանին։

◆ «Բակու»-ն յայտնում է, որ հանգուցեալ Յովհ. Ադամեանի բարեկամները և ծանօթները փոխանակ պսակ դնելու հանգուցեալի դագաղի վրա՝ հանգանակել են 4000 ր., որ տրվելու է Հայոց Մարդասիրական Ընկերութեանը իբրև անձեռնմխելի դրամագլուխ, որի տոկոսիքով պէտք է օգնութիւն տրվի հայ եկեղեցա-ծխական դրպրոցների աղքատ աշակերտներին։ Հանգուցեալի ընտանիքը Մարդասիրական Ընկերութեանը նուիրել է 300 ր.։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց գրողների ընկերութեան վարչութիւնը արդէն սկսել է երիտասարդ բանաստեղծ Գրիշաշվիլիի բոլոր գրուածքների տպագրութիւնը առանձին գրքով, որ լոյս կը տեսնի մարտի սկիզբներին։

◆ Օչմաչեղում Նենա Գաբունիան միանգամից ծնել է 4 երեխայ, որոնցից երկուսը ծնվելուն պէս մեռել են, իսկ երկուսը ապրում են։

◆ Լիլօ գիւղում գոյութիւն ունեցող կաթնատնտեսների կօօպերատիվ միութիւնը, որ հիմնված է 1912 թ. յունվարից, մեծ աջողութեամբ առաջ է տանում իր գործը։ Մի տարվայ ընթացքում վաճառվել է 2667 պուդ կաթ, որից ստացվել է 4350 բուբլի։ Մաքուր դուրս գալով՝ զուտ արդիւնք մնացել է 3167 բուբլի, որ և բաժանվել է ընկ. անդամների միջև։ Ընկերութիւնը արդէն Լիլօ գիւղում, որ Թիֆլիսից 12 վերստ հեռաւորութեան վրա է գտնվում, ձեռք է բերել իր սեփական բնակարանը և հիմնված է Վրաց Գիւղատնտեսական Ընկ.-նախաձեռնութեամբ։

◆ Յունվ. 28-ին Թիֆլիսում բացվեց վրաց թեմի հոգևորականութեան պատգամաւորների համագումարը Խոպատաձէի նախագահութեամբ։ Համագումարին մասնակցողները մաղթանքից յետոյ ներկայացան Վրաստանի էկզարխ Ալէքսէյին, որ օրհնեց նրանց աշխատանքները։ Համագումարում ներկայումս քննվում են հոգևոր-կրթական հաստատութիւնների գործերը։

ԼՈՒՐԵՐ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

◆ Դպրոցական ֆոնդի օգտին շարունակվող հանգանակութիւնը Աստրախանում փակվեց այս օրերս. Ժողովված ընդհանուր գումարը հասաւ 1345 ր.։ Այս գումարից 1000 ր. դեռ անցեալ տարվայ յունիս ամսին ուղարկված էր Էջմիածին, այս օրերս էլ մնացորդ 345 ր. հանգանակիչ մասնաժողովի անդամներ՝ Ս. քահ. Ասլանեանի և Գ. քահ. Մկրտումեանի ձեռքով տեղափոխվեց Էջմիածնի սինոդին։

◆ Աստրախանի Գրական-Գեղարուեստական Ընկերութիւնը բանակցութիւնների մէջ է մտել բանաստեղծ Ալ. Ծատուրեանի հետ՝ հրաւիրելով նրան Աստրախան մասնակցելու նրա անունը տրվելիք երեկոյթին։ Բանաստեղծը համաձայնվեց գալ։

◆ Նոյն Ընկերութիւնը պատրաստութիւնները է տեսնում հայկական մանկական առաւօտ կազմելու վերաբերմամբ։ Մանկական երգեր սովորեցնելու պարտականութիւնը վերցրել է իր վրա Արշակ Լեվխանեանը։

ՄԱՄՈՒԼ

Կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթը յունվարի 1-ի առիթով գրած իր տարեկան տեսութեան մէջ կանգ առնելով Ռուսաստանի հայերի և Էջմիածնի վրա, խօսելով այն արշաւանքի մասին, որ «Հորիզոնը» սկսեց անցեալ տարվայ վերջին Կաթողիկոսի և դիւանապետի դէմ, ի միջի այլոց գրում է.

Սակայն ասոր բուն շարժառիթն ազգային նախանձախնդրութիւնը չէր, այլ կուսակցական պայքարը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորիզոնականներու բոլոր ջանքերուն հակառակ իր 1912 հոկտեմբեր 13-ին հռչակած կարգադրութիւնը՝ ի յիշատակ Համազգային Ցօբելեանին դպրոցական ֆոնդ կազմելու՝ անդրդուելիօրէն պաշտպանած և կատարուելիք հանգանակութեան կէս հասոյթը գրական ֆոնդի մը կազմութեան յատկացնելու առաջարկը մերժած լլալով՝ առարկայ դարձաւ իր անմիջական խորհրդականներուն հետ բուռն հալածանքի։ Եւ Ժողովուրդը գայթակղեցնելու համար պատուական միջոց մը գտան հորիզոնականները բուռն պայքար մը բանալով Էջմիածնայ դէմ, իբր ազգային շահերու պաշտպանութեան անհոգ և նոյն իսկ իբր կամաւոր գործիք ռուս կառավարութեան ձեռքը։

«Հորիզոն» և իր կուսակիցները, որոնք Գէորգ Ե.-ը շրջապատել կը յուսային, իրենց յուսախաբութեան վրէժն ալ լուծել կուզէին, Էջմիածնայ մէջ տիրող ոյժը հակառակորդ կուսակցութեան աւելի համակիր դարձած տեսնելով։ Ասոր համար ամեն ջանք կը թափէին՝ ժողովրդային յուզման առիթ ընծայող հրատարակութիւններ ընելով Էջմիածնայ մէջ գործող դեր ունեցող եկեղեցականներուն դէմ։

Ժողովրդային գայթակղութիւնը բառնալու և խնդիրը բացատրելու համար Թիֆլիսի մտաւորականներուն և հանրայնի գործիչներուն Գէորգ Ե. Կաթողիկոս Էջմիածնի միաբան և սինոդական Մատթէոս եպս.-ը Թիֆլիս ղրկեց։ Մասնաւոր գումարումներու մէջ այս եպիսկոպոսը վաւերագիրներով տուաւ Էջմիածնայ ընթացքն արդարացնող բացատրութիւններ, որոնցմէ կը հասկնուէր—ինչպէս դիտել տուինք արդէն—թէ եղած կարգադրութիւնը բոլորովին նոր բան մը չէր, քանի որ անիկա արդէն կը գործադրուէր թեմական դպրոցներուն համար։

Ասկէ զատ, այս կարգադրութեան սկզբունքն ընդունուած էր դպրոցական նոր կանոնադրութիւն մը կազմելու համար Թիֆլիսի մտաւորականներէն բաղկացեալ այն խորհրդաժողովին կողմէ, որ Իզմիրլեան կաթողիկոսի հրաւէրով կազմուեցաւ, երբ կառավարութիւնը 1905-ին հայ դպրոցներուն վերաբացումը արտօնելէ յետոյ վերաքննելու որոշում տուաւ ուժամապէս վերակենդանացած 1874-ի կանոնագիրը։ Այս յանձնաժողովին մէջ կը գտնուէին յայտնի հոգիզոնականներ, որոնք կերևայ թէ այն ատեն չէին կըրցած տեսնել այն անպատեհութիւնները, զորս այսօր կը տեսնէին տեսակ երեւոյթով մը, անշուշտ Համազգային Ցօբելեանին համար կաթողիկոսական կոնդակով հաստատուած միակերպութիւնը և ներդաշնակութիւնը խանգարելու նպատակաւ իրենց ըրած փորձին ձախողումէն յետոյ տարօրինակ սրատեսութեամբ մը օժտուած։

Այս ջախջախիչ յայտնութիւնը կերևայ թէ բաւական եղաւ լռութեան մատնելու Էջմիածնի հակառակորդները, որոնք այլ ևս դադրեցան այս պայքարը շարունակելէ, առանց սակայն դադրելու առիթը ներկայացած պահուն գնդասեղի հարուածներ տալէ։

Խօսելով ապա Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի մասին, թերթը կցում է.

Ռուսաստանի սահմաններուն մէջ գտնուող թեմերուն առաջնորդներէն մէկ քանին փոխուեցան այս տարի։ Այսպէս՝ տարւոյն սկիզբը Թիֆլիսի թեմին առաջնորդ կարգուեցաւ սինոդական մագիստրոս տէր-Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէկեան, որ առաջին անգամ ըլլալով գրեթէ կը կոչուէր վարչական պաշտօնի։ Մեսրոպ եպիսկ. յունուարին անուանուեցաւ, սակայն պաշտօնի ձեռնարկեց մարտ 3-ին։ Իր 10 ամսեան պաշտօնավարութիւնն իսկ որոշ դաղափար մը տուաւ թէ Մեսրոպ եպ. ռուսահայ թեմերէն ամենէն փափկագոյնին և դժուարագոյնին վարչէն ըլլալու կոչումը չունի։ Թիֆլիսի մէջ հասարակութեան ամեն խաւերէն յօրինեանական յանձնաժողով մը կազմելու անկարող եղաւ և չկրցաւ՝ հակառակ յայտնուած փաղանքներուն՝ համերաշխութիւն յառաջ բերել և Էջմիածնայ որոշումներուն համակերպիլ յորդորել կարգ մը ինքնագլուխ գործելու յաւակնող անձեր։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 25 յունվարի

«Մշակ» օրաթերթի № 13-ի մէջ ճեմարանի դասադուլի առիթով Էջմիածնից կայ մի թղթակցութիւն, որտեղ լրատուն չէ կարողացել զերծ մնալ սխալ և ոչ-ճիշդ տեղեկութիւններ հաղորդելուց։ Յօդուածի մէջ յիշված է, որ իբր թէ ուսանողութիւնն ու աշակերտութիւնը պահանջ է դրել անպատճառ Ս. Տիգրանեանին հրաւիրել ճեմարան իբրև տեսուչ։ Այդ ճիշդ չէ։ Ճիշդ է, մենք պահանջել ենք, որ ճեմարանի ներկայ տեսուչ Բագրատ եպիսկոպոսը հրաժարվի տեսչութիւնից, հէնց դրա համար էլ յայտարարել ենք դասադուլ, բայց ոչ մի դէպքում չենք պահանջել որևէ տեսուչ։ Ուրիշ բան է, որ մենք ցանկացել ենք տեսնել Տիգրանեանին ճեմարանի տեսչի պաշտօնում։ Ս. Տիգրանեանը առաջին անգամ առաջարկվել է Բագրատ եպիսկոպոսի կողմից։ Բագրատ եպիսկոպոսը նոյեմբերին ուսանողութեանը առաջադրել է Ս. Տիգրանեանին, իբրև ամենայարմար փոխ-տեսչացու, որի համար և իրը պէտք է աշխատէր։ Անուանական փաստը։ Թող լաւ իմանայ պ. լրատուն, որ մենք շատ լաւ ենք գիտակցում մեր իրաւունքի սահմանները։

Մինոյն յօդուածում կարդում ենք. «Տիգրանեանի հանախոնները բաւական մեծ եռանդով գործում են՝ զրգռելով աշակերտութեան»։ Այսուհ գալիս ենք վճռականօրէն հերքելու այդ մտացածին սխալ լուրը։ Մենք գործել ենք խորին համոզումով և սառն գրտակցութեամբ։ Մեր գործը չէ կրել ոգեւորութեան բնոյթ, որ առաջ կը գար այն դէպքում միայն, եթէ իրօք ճիշդ լինէին լրատուի ասածները։ Այս էլ ասենք, որ դժգոհութիւններ Բագրատ եպիսկոպոսի դէմ յանկարծակի չեն ծագել։ Այդ տարիների արդիւնք է։ Հէնց նրա տեսչութեան առաջին տարվանից ուսանողութիւնն ու աշակերտութիւնը դժգոհ է եղել նրանից և արտայայտել է իր դժգոհութիւնները, բայց տեսչին աջողվել է խեղդել այն։ Մեր դիտակէտը այսպէս ուժեղ չի արտայայտվել, և ճեմարանն արտաքուստ երևացել է խաղաղ, հաստատութիւն էլ ենթադրել է, թէ ճեմարանը Բագրատ եպիսկոպոսի օրով խաղաղ է, դժգոհութիւններ չը կան, ճեմարանը ծառայում է իր կոչմանը և այլն և այլն։

Պ. լրատուն չի բաւականացել այսքանով։ Նա դեռ ասելիք ունի և ասում է. «Խօսվում է այն մասին, որ այս բոլոր ինտրիգները հետևանք են Ս. Տիգրանեանի հանդուգն բարեկամների անդուլ ջանքերի և հորիզոնականների գաղտնի արարքների»։ Շատ հետաքրքրական էր իմանալ, թէ որտե՞ղ և ե՞րբ է խօսվել կամ «խօսվում»։ Կարծում ենք, որ սեփական ցանկութիւնն է եղել՝ խօսվի, և ինչ փոյթ, թէ ընաւ չի էլ խօսվում։ Ցանկացածն հաղորդել դժուար չէ։

Ցանկալի էր իմանալ, թէ ինչ «ինտրիգներ» մասին է խօսքը։ Հերքելով յիշեալ յօդուածի մի շարք կարևոր կէտերը, մենք կրկնում ենք՝ 1) Երբէք պահանջ չենք դրել, որ Ս. Տիգրանեան անպատճառ տեսուչ լինի։ 2) Ուսանողութիւնը երբէք թոյլ էլ չէր տայ, որ զանազան մարդիկ գային և իրան գրգռէին։ 3) Այս դասադուլը և նրանից առաջ եղած գործերը հետևանք են ուսանողութեան խորը գիտակցութեան և ոչ թէ «հորիզոնականների գաղտնի արարքների»։

Մենք աւելորդ ենք համարում խօսել «Մշակի» № 14-ի առաջնորդողի մասին,

քանի որ այն հիմնված է № 13-ի սխալ տեղեկութիւններով լի յօդուածի վրա, իսկ հերքելով յիշեալը՝ հերքվում է նաև №14-ի առաջնորդող յօդուածը։

Ուսանողական ժողովների նախագահ՝
Մ. Մարտիրոսեան
Քարտուղարներ՝ Մ. Մկրտումեան
Եր. Բաղդասեան

Ծանօթ. Խմբ. — Տպագրելով անփոփոխ Գէորգեան ճեմարանի ուսանողների ներկայ հերքումը, որ ուղարկված է մեզ, անտեղի չենք համարում անել և մեր դիտողութիւնները։ Ուսանող երիտասարդութեան ամենագեղեցիկ յատկութիւնը՝ համբակախօսութիւնը և ճշմարտախօսութիւնն է. այդ յատկութիւնները դուք կը նկատէք միշտ քաղաքակիրթ ազգերի ուսանողութեան մէջ, օրինակ՝ գերմանականի, ռուսականի և այլոց մէջ։ Ուրախ կը լինէինք նոյնը տեսնել և մեր ազգային-հոգևոր ճեմարանի ուսանողների մէջ. դժբաղդաբար, ներկայ հերքումը իր բովանդակութեամբ և մեր ունեցած փաստական տեղեկութիւնները կասկածելի են կացուցանում նրանց ճշմարտախօսութիւնը։ Ի՞նչ է նշանակում ասել, թէ մենք պահանջ չենք դրել Ս. Տիգրանեանի համար, բայց ցանկացել ենք տեսնել նրան տեսչի պաշտօնի մէջ։ Մենք դեռ չենք հրատարակում մեր ձեռքում գտնվող փաստերը, բայց թէ դասադուլ անողները և նրանց կողմից պահանջներ դնողները, արդարև, պահանջ են դրել Ս. Տիգրանեանի մասին, դրա ապացոյցն այն է, որ դասադուլը դադարեց, երբ Կաթողիկոսի կողմից խոստացվում է հրաւիրել Ս. Տիգրանեանին։ Չէ համապատասխանում ճշմարտութեան և այն առարկութիւնը, թէ ուսանողները դրդողներ չեն ունեցել և գործել են գիտակցօրէն և անկախօրէն։ Դարձեալ մենք փաստեր ունենք մեր ձեռքին, որ հոկտեմբեր ամսին, համազգային յօբելեանի առիթով և պատրաստվող Թիֆլիսից էջմիածին գնացած «հորիզոնականները» ժողովներ էին գումարում ուսանողների հետ և արծարծում Ս. Տիգրանեանին հրաւիրելու հարցը։ Եթէ, արդարև, Բազրատ եպիսկոպոսը վաղուց յարուցել էր ուսանողների գժգոհութիւնը և ոչ հոկտեմբերին եղած ագիտացիայից յետոյ, ինչու ամբողջ տարիներ լռում էին ուսանողները։ Բազմաթիւ փաստեր կան ապացուցանող, որ ագիտացիան ճեմարանի ուսանողների մէջ սկսվեց միայն «Հորիզոնի» սկսած արշաւանքից յետոյ ուսանողների խնդրի վերաբերմամբ։ Այո, շատ և շատ քիչերին է վիճակված մեր հայկական վարակված մթնոլորտում համբակախօս և ճշմարտախօս լինել։

ՀԱՇԻՒ

Կ. Հ. Բ. ԸՆԿ. օգտին Թիֆլ. Ժողովարանի դահլիճում յունվ. 18-ին կայացած երեկոյթի.

Մուտք.— Տոմսակներից (պրէմիաներով) 3288 ր. 72 կ., վիճակախաղից 1127 ր. 85 կ., պտի-շվօյից 260 ր. 85 կ., շամպայնից 164 ր., ծաղիկներից 138 ր. 51 կ.։ Գումարը 4979 ր. 93 կ.։ Մնում է ապառիկ 350 ր.։ Ընդամենը 5329 ր. 93 կ.։

Ծախք.—Դահլիճի վարձ և զարդարանք 689 ր. 45 կ., վիճակախաղի իրեր 277 ր. 94 կ., ուխտադնացութեան կազմակերպութիւնը 247 ր. 68 կ., երաժշտութեան 180 ր., մարմաներ 103 ր., տոմսակների, յայտարարութիւն. և աֆիշների 98 ր. 85 կ., ծառաներին, բանւորներին և այլ մանր ծախսեր 35 ր. 74 կ.։ Ընդամենը 1632 ր. 66 կոպէկ։

Զուտ արդիւնք՝ 3697 ր. 27 կ.։

Շնորհակալութեամբ ստացված են պրեմիաներ՝ կոմս Ի. Ի. և կոմսուհի Ե. Ա. Վորոնցով-Դաշկովներից 200 ր., պ. պ. Դ. Աւան-Իւզբաշեանից 95 ր., Հ. Մելիքեանից 45 ր., իշխ. Մ. Մելիքովից, Մեսրոպ եպիսկոպոսից 25-կան ր., Ա. Մ.-Ազարեանից, Մ. Արամեանից և տիկ. Ե. Միրզոյեանից 22 ր. 50-ական կոպէկ, իշխ. Բ. Արղութեանից, բժ. Գ. Ամբարդումեանից, Ա. Ցիթոնցեանից, Մ. Բօբից 20-ական ռուբլի, Մ. Գոլուխանեանից 12 ր. 50 կ., Ա. Միշայեվսկիից, Ն. Պետերսոնից, Ֆ. Պոպովից 10-ական ռուբլի և զանազան անձերից 130 ր. 72 կ.։ Ընդամենը 715 ր. 72 կ.։ Ընկերութեան խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը տիկիններ և օրիորդներ՝ իշխ. Ա. Արղութեանին, Ե. Աֆրիկեանին, Ս. Բօզարջեանին, Տ. Գուրգէնովային, Ե. Գուլազեանին, Ե. և Ե. Թամամշեաններին, Օ. Խաչատրեանին, Ե. Ղորղանեանին, Ե. Ղուլեանին, Օ. Մայսուրեանին, Հ. Մարկոսեանին, Ս. Մանտինեանին, Մանուչարեանին, Մ. Ցարութիւնեանին, Մ. Շահիկեանին, Լ. Սեռումեանին, Ա. Սուլթանեանին, Մ. Սօլովեանին, Զ. Տատաջեանին, տիկ. Փառանձէմին, Մ. Փիրումեանին, Զ. Փրիդոնեանին և Ս. Քալանթարեանին։ Պ. պ. Ս. Արղութեանին, Գ. Բաշինջաղեանին, Գ. Իփեկեանին, Գ. Միրաղանին, Ա. Ցարութիւնեանին, Տ. Նալբանդեանին, Տ. Ուչունջեանին, Վրոյրին, Գ. Տէր-Դաւթեանին, Գ. Փիրումեանին և բոլոր այն օրիորդներին, տիկիններին և պարոններին, որոնք իրանց սիրալիր մասնակցութեամբ, պարերով և երգերով նպաստեցին երեկոյթի աջողութեանը։ Տիկ. Լատին և տիկ. Ա. Պողոսեանին, որոնք ուղարկել էին Արի քաղցրաւենիք, պ. պ. Կ. Խալաթեանին, որ նուիրել էր 60 արշին չիթ, Տ. Նազարեանին երկոյթի յայտարարութիւնը «Տարազում» ձրի տպագրելուն համար, «Մշակ», «Հորիզոն», «Կովկասի Լրաբեր», «Кавк.» և «Тифл. Лист.» լրագիրներին, որոնք յայտարարութիւնը տպեցին մեծ զեղչով։

Խորհուրդ

—

Թիֆլիս, 30 յունվարի

Թոյլ տուէք ձեր թերթի միջոցով յայտնել ընթերցող հասակակութեանը և «Մեր Խօսքի» բաժանորդներին, որ մի քանի պատճառներից դրդված ստիպված եմ ժամանակաւորապէս դադարեցնել իմ հրատարակութիւնը։ Բաժանորդներին այս կամ այլ կերպ բաւարարութիւն կը տրվի։

«Մեր Խօսքի» խմբագիր-հրատարակիչ՝
Ե. Օհանեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիական ներկայ մինիստրական կազմը, Դուսմերգի նախագահութեամբ, աչքի է ընկնում իր եռանդուն գործունէութեամբ։ Մշակվում և իրագործվում են մի շարք օրինագծեր, գլխաւորապէս երեք մինիսթրութիւնների մէջ՝ ժողովրդական լուսաւորութեան, զինւորական և ֆինանսների մինիսթրութիւններում։

Ժողովրդական լուսաւորութեան մինիսթրութիւնը մշակել է և պարլամենտը արդէն ընդունել է դպրոցական նոր օրէնքներ՝ դպրոցական դրամարկղներ աղքատ աշակերտների համար. դպրոց յաճախելու հարկադրութեան մասին. ծնողների և կողմնակի անձանց պատասխանատուութիւնը պարտադիր ուսման օրէնքը խախտելու դէպքում։ Պատրաստ են օրինագծեր յետագայ ուսման և կրկնողական կուրսերի մասին, և մասնաւոր «ազատ» դպրոցների ուսուցիչների կրթական ցենզի մասին։

Զինւորական մինիսթրութիւնը ճշդիւ հաշիւ է առնում երկրի պաշտպանութեան վրա ծախսվող գումարները։ Զինւորական վարչութեան բիւջէի ծախսից դուրս է գցված մօտ 30 միլիոն, որպէս աւելորդ հաշված գումար. միևնոյն ժամանակ, ծանր արտիլէրիայի ուժեղացման համար, նախահաշիվ մէջ մտցված է 80 միլիոն ֆրանկ։ Առանձին մեծ ուշադրութիւն է դարձվում զինւորական օդագնացութեան վրա, որպէսզի բարձրացնեն այդ 4-րդ տեսակի զէնքը։

Բայց Դուսմերգի կաբինէտի գործունէութեան մէջ՝ գլխաւոր, կենտրոնական տեղն է բռնում ֆինանսական օրէնսդրութեան մասը։ Ֆինանսների մինիստրութեան մէջ՝ նոր, չը տեսնված կարգու կանոն է մտցված։ Բիւջէն պակասեցված է 50 միլիոնով։ Ճշդիւ հաշիւ է առնված ընթացիկ պարտքը։ Մշակված է՝ ծախքերը նախապէս կօնտրոլի ենթարկելու օրինագիծը։

Բայց հասարակութեան առանձին ուշադրութիւնն է գրաւում այն ֆինանսական օրինագիծը, որ տուրք է սահմանում կապիտալի վրա։ Ֆրանսիայի սահմաններում գտնվող բոլոր շարժական և անշարժ կապիտալները ենթարկվում են տուրքի։ Տուրքից ազատ են միայն ընտանիքի առաջին 30,000 ֆրանկը և պլուս՝ ընտանիքի ամեն մի՝ աշխատանքի անկարող անդամի համար (անչափահասների, զառամածների և այլն) սահմանված 5000 ֆրանկը։ Կապիտալից հանելով այդ գումարները և գոյքային ու անձնական պարտքերը (որոնք պէտք է փոկումենտներով հաստատված լինեն), մնացեալ զուտ կապիտալը ենթարկվում է աստիճանաբար աճող տուրքի։

Այսպէս՝ մէկ միլիոնից բարձր կապիտալի ամեն մի 1000 ֆրանկից տուրք է առնվում 2,50/0. 500,000-ից մինչև մէկ միլիոն կապիտալից առնվում է այդ տոկոսի 4/5-ը. 300,000-ից մինչև 500,000-ը սահմանված տոկոսի 3/5-ը. 120,000-ից մինչև 300,000—2/5-ը. աւելի փոքր կապիտալներից սահմանված տոկոսի միայն 1/5-ը։ Ակցիոներական ձեռնարկութիւնները տուրք են վճարում իրանց բոլոր անշարժ և դրամական գոյքերից, զերծ ակցիոներական ու օբլիգացիական կապիտալներից։ Գոյքի տերը ինքն է հաշիւ առնում իր կարողութիւնը, ներկայացնելով բոլոր պատշաճաւոր դոկումենտները, իսկ ֆինանսների մինիսթրութիւնը ստուգում, կօնտրոլի է ենթարկում։

Ֆինանսական այդ օրինագիծը, «հարստութիւնների տուրքը», մեծ իրարանցում է առաջ բերել հասարակութեան մէջ, հարուստների շրջանում։

Պահպանողական մամուլը գոռում է աղգային մնակութեան, կողոպուտի, ահռելարան գաղտնիքների խախտման մասին։ Բայց կապիտալի ու եկամուտի այդ տուրքը երբի կընդունվի, որովհետև դա միակ միջոցն է ազգային պաշտպանութեան արված և զօրաբանակի կօնտինգենտը աւելանալու պատճառով, բիւջետային չափազանց մեծ ծախքերը ծածկելու համար։

Բիւջէի քննութիւնը պալատում սկսվելու է փետրվարի սկզբին, իսկ մայիսի 31-ին լրանում է ներկայ պարլամենտի ժամանակաշրջանը։ Ժամանակը կարճ է, և կաբինէտը շտապում է անց կացնել իր ծրագիրները։ Աջողութեան համար անհրաժեշտ է ամուր դիրք և մեծամասնութիւն ունենալ պալատում։ Դուսմերգի բադիկալ մինիսթրութեան կողմնակից են 169 միացեալ արմատականներ, 28 հանրապետական սոցիալիստներ և գուցէ բոլոր միացեալ սոցիալիստները, գուցէ նրանց 2/3-ը՝ ժօրէսիստները։ Այդ կորոշվի։

Ամենուսմ տեղի ունեցող սոցիալիստների կօնգրէսից յետոյ։ Ուրեմն, առայժմ գոնէ, կաբինէտը կարող է յուսալ մօտաւորապէս 250 ձայների վրա։

ՊՕԼ ԴԵՐՈՒԼԷՏ

Ինչպէս հեռագիրները հաղորդեցին, նորերս վախճանվեց Պօլ Դերուլէդը, որ ֆրանսիական բէակցիօնէրների, նացիօնալիստների և շովինիստների պարագլուխներից մին էր։ Նա միևնոյն ժամանակ յայտնի է իբրև ժողովրդական բանաստեղծ և գրող։

Պօլ Դերուլէդը, որ ծնվեց 1846 թ. և մատաղ հասակում հանդէս եկաւ գրական ասպարէզում իբրև բանաստեղծ և դրամատուրգ, 1870 թ. մասնակցեց ֆրանսա-պրուսական պատերազմին, վիրաւորվեց Սեդանում և գերվեց, բայց փախաւ գերութիւնից։

Պատերազմից յետոյ նա լոյս ընծայեց ռանսաւորների երկու ժողովածու հայրենասիրական թեմայով։ Այդ ժողովածուները, որոնք յայտնի են «Զինուորի երգեր» անուանով, ահագին ժողովրդականութիւն և աջողութիւն ունեցան։ Բացի դրանից, Դերուլէդը գրեց մի քանի դրամաներ, որոնք նոյնպէս մեծ աջողութիւն ունեցան ֆրանսիական թատրոնների բեմերի վրա։

Սակայն Դերուլէդը հռչակաւոր դարձաւ աւելի իր քաղաքական գործունէութեամբ։

Նա կազմակերպեց 1882 թ. «Հայրենասէրների դաշնակցութիւնը» (La ligue des patriotes), որի նպատակն էր՝ պատրաստել բէվանշ (Գերմանիայից վրէժ առնելը)։ Դաշնակցութիւնը մեծ աջողութիւն ունեցաւ և շատ նպաստեց նեղ նացիօնալիզմի և անզուսպ շովինիզմի գաղափարների տարածման։

Հակա-գերմանական ագիտացիայի նպատակով Դերուլէդը երկու անգամ ճանապարհորդեց Ռուսաստան։

Նա եռանդուն կողմնակից էր գեներալ Բուլանժէի և նոյնիսկ սրա փախուստից յետոյ շարունակեց ագիտացիա մղել նրա օգտին։ 1889 թ. նա ընտրվեց ազգային ժողովի անդամ, բայց երբ կեղծ մեղադրանք բարդեց Կլեմանսոյի վրա, ստիպվեց հրաժարվել պատգամաւորական պաշտօնից։ Դրէյֆուսի և Զոլայի դատերի ժամանակ նա աղմկալից կերպով հանդէս եկաւ, իբրև ընդհանուր շտաբի օֆիցէրների պաշտպան։ Բայց շուտով նա մեղադրվեց պետական յեղաշրջում առաջացնելու փորձի մէջ և դատապարտվեց 5 տարվայ աքսորի Ֆրանսիայի սահմաններից դուրս։ Դատի ժամանակ նա համոզվեց, որ միապետականների ձեռքին գործիք է եղել, որովհետև ինքն այնու ամենայնիվ անկեղծ հանրապետական էր։ Աքսորից վերադարձաւ, երբ ընդհանուր ամնիստիա տեղի ունեցաւ, բայց վերադարձից յետոյ նա այլևս չը մտաւ քաղաքական ասպարէզ և հեռացաւ որևէ հասարակական գործունէութիւնից։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ղօչան, 18 յունվարի

Դեկտ. 31-ի գիշերը տեղական հայ ինտելիգենցիայի նախաձեռնութեամբ կազմակերպվեց բաւական համեստ ծրագրով մի ընտանեկան երեկոյթ։

Կազմակերպողները կարելին չափ ուրախանց կացնելու համար պատրաստել էին փոքրերի համար շքեղ տօնածառ, իսկ հասակաւորների՝ վիճակախաղ, բուֆէտ և այլն։

Տօնածառի շուրջը փոքրիկները երգեցին, արտասանեցին մանկական ոտանաւորներ, և ապա բաժանվեցին տօնածառի իրերը։ Երեկոյթը, որ տևեց մինչև ժամը 1-ը, անցաւ բաւական ուրախ։ Զուտ արդիւնք սպասվում է 70—80 ռուբլի, որը յատկացվելու է «դպրոցական ֆոնդին»։

Յունվարի 13-ին այստեղ ոտքով եկաւ աշխարհաշրջիկ Էմմանուէլ Լակօնը։ Ծարգելի տուրիստը ազգով յոյն է և աւստրիահպատակ։ Նա իր ճանապարհորդութիւնը սկսել է 1905 թ. մարտի 17-ին Սոֆիայից, ընդամենը 1½ կոպէկ կապիտալով։ Մինչև այժմ շրջել է Բալկանները, Հարաւային Եւրոպան, Փոքր Ասիան, Աֆրիկան, Աւստրալիան, Արաբիան, Հնդկաստանը, Կովկասը և Պարսկաստանը։ Ճանապարհորդութեան նպատակն է ուսումնասիրել ժողովուրդների կենցաղն ու սովորութիւնները, նրանց իրաւունքներն ու նիստ ու կացը, որոնք և առանձին գրքերով հրատարակում է յարգելի ճամբորդը, որը մինչև 1912 թ. անցել է 71,000 վերստ. Հաբէշստանում Մենելիք II թագաւորից ստացել է Սողոմոն Ш-ի ադամանդազարդ խաչը։

Տեղական հայերը, պէտք է ասել, բաւական ջերմ ընդունելութիւն ցոյց տուին և բացի այդ՝ հանդանակութիւն բաց արին, որից գոյացաւ 50 ռուբ.։

Ղօչանում 5 օր մնալուց յետոյ այսօր երեկոյեան մեկնեց Մէշէդ, որը աւելի մեծ և հետաքրքրական քաղաք լինելով՝ երկար պէտք է մնայ։

Եղանակները մեզ մօտ մինչև ամիս 15-ը գարնանային էին. միայն երէկ գիշեր բաւական ձիւն եկաւ։ Ղարիբ-Ախպէր

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Պետական Դումայի անդամների տեղեկութիւնների համաձայն, ներկայումս վերացվում են պահնորդական բաժանմունքները ամբողջ Ռուսաստանում, բացի Պետերբուրգ, Մոսկվա և Վարշավա քաղաքներից։ Նրանց իրաւասութեանը վերաբերեալ բոլոր գործերը անցնելու են ժանդարմական վարչութիւնների ձեռքը, որոնք գործելու են նահանգապետների հսկողութիւնների ներքոյ։ Այս փոփոխութիւնը կատարվում է ներքին գործերի մինիստրի օգնական Զունկովսկիի առաջարկութեամբ։

✦ Կ. Պոլսից հեռագրում են, որ Գերմանիան առաջարկեց Թիւրքիային 300,000 ֆունտ այն պայմանով, եթէ Բ. Դուռը կը տայ իրան ինքնիշխան իրաւունք նաւադնացութիւն հաստատելու Բոսֆորում և Դարդանելում։ Սակայն Բ. Դուռը Գերմանիայի յիշեալ խորամանկ առաջարկութիւնը ընդունելի չը գտաւ։

✦ Պարիզից հեռագրում են, որ հայրենասէրների լիգան հանդանակութիւն է սկսել Դերուլէդին արձան կանգնեցնելու համար։

✦ Պարիզում բացվում է յատուկ քրէական-պատժիչ դատարան երեխաների համար։

✦ Թիւրք-յունական պատերազմը դառնում է օրվայ հարց։

✦ Պետերբուրգից հեռագրում են, որ ժող. լուսաւորութեան մինիստր կասսօյի հրաժարականը ընդունվել է։

✦ Լուրերի համաձայն, Լէնայի դէպքերի յայտնի հերոս բոմբիստ Տրեշչենկովը դառնում է քահանայ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№4711. **ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՕՆԸ**

Դորձ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկութիւնը։

Միակ գործարանատէր

Շնորհիւ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցերինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապօնը» կանոնաւոր գործադրողները պարտակ են նրան իրանց պատանեկան հասակին յատուկ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքոյշ կաշւով, որոնք իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ տնտեսութիւն։ Իսկականը միայն բոլոր պետութիւն. յայտարար. «№ 4711» մարկայով։

(M. 544862) 16—4

ОТКРЫТА ПОДПИСКА
НА
ОБЩЕДОСТУПНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ
Энциклопедическій Словарь
Товарищеста Издательскаго Дѣла „КОПѢЙКА“.

ЭНЦИКЛОПЕДИЧЕСКІЙ СЛОВАРЬ будетъ выходить еженедѣльными выпусками въ теченіе 1914 года. 52 выпуска составятъ большой, роскошно отпечатанный томъ, заключающій въ себѣ свыше 1700 страницъ убористаго шрифта. Энциклопедическій Словарь будетъ заключать въ себѣ болѣе 3000 иллюстр., 800 портретовъ и 150 картъ, отпечатанныхъ въ нѣсколько красокъ. Кромѣ того, къ словарю будутъ приложены таблицы цвѣтныхъ рисунковъ, художественно отпечатанныхъ на мѣловой бумагѣ.

Составленіе Энциклопедическаго Словаря поручено виднѣйшимъ представителямъ въ областяхъ науки, искусства и прикладныхъ знаній, которые о каждомъ предметѣ и понятіи сумѣютъ въ немногихъ словахъ сказать все, что требуется знать каждому образованному человѣку. Участіе лучшихъ спеціалистовъ въ составленіи Энциклопедическаго Словаря является гарантіей того, что всѣ свѣдѣнія, помѣщенныя въ немъ, будутъ согласоваться съ новѣйшими изслѣдованіями, открытіями и завоеваніями человѣческаго генія во всѣхъ областяхъ міровой жизни.

Энциклопедическій Словарь Т-ва Издательскаго Дѣла «КОПѢЙКА» явится, такимъ образомъ, незамѣнимымъ спутникомъ въ жизни каждаго человѣка, настоящей сокровищницей знанія, необходимымъ и полезнѣйшимъ пособіемъ для саморазвитія и самообразованія.

Заключая въ себѣ свыше 50 географическихъ картъ, отпечатанныхъ въ 12 красокъ, этотъ Энциклопедическій Словарь будетъ замѣнять географическіе атласы,

Снабженный свыше 3000 иллюстрацій и 800 портретовъ, Энциклопедическій Словарь будетъ служить незамѣнимымъ руководствомъ въ дѣлѣ нагляднаго обученія, давая возможность избѣгнуть пріобрѣтенія многочисленныхъ таблицъ, картъ и атласовъ.

Всѣ подписчики Энциклопедическаго Словаря получатъ въ видѣ безплатной преміи прочную, удобную и изящную папку для переплета. Первый выпускъ Энциклопедическаго Словаря выйдетъ въ Январѣ 1914 года. Весь Энциклопедическій Словарь выйдетъ въ теченіе года.

52 ВЫПУСКА со всѣми приложен: по подпискѣ 5 р. ЦѢНА

Подписныя деньги адресовать: С.-ПЕТЕРБУРГЪ, Т-во Издат. Дѣла «Копѣйка» Лиговская, 111—113, собствен. домъ.

Допускается слѣдующая РАЗСРОЧКА: при подпискѣ—2 р., къ 1-му марта—1 р. 50 к. и къ 1-му мая 1 руб. 50 коп.

71. 8—1

Открыта подписка на 1914 г.
Софія
Ежемѣсячный журналъ искусства и литературы, издаваемый въ Москвѣ К. Ф. НЕКРАСОВЫМЪ подъ редакціей П. П. МУРАТОВА.

Подписная цѣна: съ пересылкой и доставкой въ годъ—12 р. За границу: 50 fcs. Цѣна отд. нумера отъ 1 р. 25 к. до 2 р.

Допускается расрочка: при подпискѣ—5 р., въ маѣ—4 р. и въ августѣ—3 р.

Адресъ конторы: Москва Тверская, 29, кв. 46. Телефонъ 3-38-45. Подписка принимается также: Спб. Невскій, 134, кв. 10, и въ книжныхъ магазинахъ: «Вольфъ», «Новое Время» (С.-Петербургъ, Москва), «Наука» (Москвѣ). Адресъ редакціи: Москва, Знаменка, Крестовоздвиженскій пер., д. 2, кв. 1. Телефонъ 3-52-09.

Второй (февральскій) нумеръ выйдетъ въ концѣ января.

66. 4—3

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎ ԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎԱՅԱ. ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում գրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրտէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այնու յանձնել։

ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԻՔՍ-ԿՈՒՌԱՆՑԻ ԳՆԵՐՈՎ։

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный